

## ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՕՊՈՒԺԻՆ ԱԶԿՅՈՒԹԵԱՄԲ ԻՏԼԻՊԻ ԱՐՈՒՐԱՅԱՆԻՆ ՄԵՋ ԶԻՆԵԱԼ ԱԶԱՐԵԿՉԱԿԱՆ ԽՄԲԱԲՐՈՒՄՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՆԱՆՈՅՆԵՐ ՈՉՆՉԱՅՈՒՅ

Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտարարեց. «Ի պատասխան օրեր առաջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու կողմէ Դամայի եւ Լաթաքիոյ արուարձաններուն ուղղութեամբ իրագործուած յարձակումներուն, որոնց հետեւանքով զոհեր եւ նիւթական վնասներ արձանագրուեցան, սուրիական բանակը ռուսական օդուծին աջակցութեամբ թիրախ դարձուց եւ ոչնչացուց Իտլիպի արուարձանին մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու եւնթակալ կեդրոններ, իրթիւններու արձակման վայրեր, պահեստանոցներ եւ թաքստոցներ, ահաբեկիչներու նկատուելի թիւ մը թիրախ դարձնելով»:



## ՆԱԽԱՐԱՐ ՄԸՔՏԱՏ ԱՏԱՆՁՆԵՅՑ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ԱԼՃԵՐԻՈՅ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊՈՒՆԻՆ ՀԱԽՏԱՐՄԱԳԻՐԸ

Սուրիոյ արտաքին գործոց նախարար դուկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ ստանձնեց Բամալ Պուշամայի հաւատարմագիրը, որպէս Սուրիոյ Դանրապետութեան մէջ Ալճերիոյ Դանրապետութեան լիազօր դեսպան: Նախարար Մըքտատ Պուշամայի հետ հանդիպումին ընթացքին շեշտեց Սուրիոյ եւ Ալճերիոյ տարբեր մակարդակներով խորարմատ յարաբերութիւններու պահպանման կարեւորութիւնը: Նախարար Մըքտատ անոր փոխանցեց նաեւ Սուրիոյ դեկլարութեան եւ ժողովուրդին շնորհակալութիւնը՝ Սուրիոյ պատերազմի եւ աղետալի երկրաշարժի շրջաններուն Ալճերիոյ զօրակցական կեցուածքներուն համար, դեսպան Պուշամայի մաղթելով յաջողութիւն իր առաքելութեան մէջ:



Իր կարգին դեսպան Պուշամա յայտնեց, որ իր կարելին ի գործ պիտի դնէ երկու երկիրներու յարաբերութեան զարգացման ամուլուող Ալճերիոյ դեկլարութեան ցուցմունքներն ու թելադրանքները գործադրելու:

## ԴԵՍՊԱՆ ԱԼԱ ՀԱԽՏԱՐՄԱԳԻՐԸ ՅԱՆՁՆԵՅՑ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԶԱՐԳՈՒՄԱՐԻՆ, ՈՐՊԵՍ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՈՒՆ ԲԱՆԱԳՆԱՅ

Դեսպան Դուսամ ատտին Ալա, որպէս Արաբական Լիկայի մէջ Սուրիոյ Դանրապետութեան մնայուն բանագնաց, իր հաւատարմագիրը յանձնեց Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ահմետ Ապու Ղեյթին: Դեսպան Ալա շեշտեց Սուրիոյ եւ արաբական երկիրներուն սերտ գործակցութեան անհրաժեշտութիւնն ու այդ նպատակին իրագործման համար Արաբական Լիկայի կարեւոր դերակատարութիւնը, անելնելով, որ Սուրիոյ Արաբական Լիկա վերադարձը պիտի զարգացնէ այս գործակցութիւնը՝ ի նպատակ արաբական կարեւորագոյն դատերու լուծման եւ անդամ պետութիւններու շահերուն:



## ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՄԱՍՆԱԿՅԵՅԱՒ «ՄԱՅԻՏԱԹ ԱԼ-ՇԱՀՊԱՆ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԶՈՒՅԱԶԱՆԴԵՍԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, 23 Յունիս 2023-ի յետմիջօրէին, Բերիոյ Դայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ ճարտարարուեստի նախարար դուկտ. Ապտ ալ-Քատեր Ճուխատարին հովանաւորութեամբ եւ Դալեպի ճարտարարուեստի գրասենեակի Գործարար Տիկիներու Յանձնախումբին կազմակերպութեամբ տեղի ունեցող «Մայիտաթ ալ-Շահպան» ցուցահանդեսի բացման արարողութեան, պետական բարձրաստիճան պատասխանատուներու հետ, «Շահպան Ռոգ» ցուցարահէն ներս:



Բացման արարողութեան կը մասնակցէին Դալեպի նահանգապետ Դուսէյն Տիապ, Պասսի-Դալեպի կուսակցապետ Շար. Էջ 8

## ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ «ԳԱՆՁԱՍԱՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

«Գանձասար»-ի 30-ամեակին առիթով, Բերիոյ Դայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան այցելեց «Գանձասար»-ի խմբագրատուն, ծանօթացաւ խմբագրակազմի անդամներուն եւ մտերմիկ գրոյց մը ունեցաւ անոնց հետ:



Շար. Էջ 5

## ԱՏՐՊԵՅՃԱՆ ԸՆԴԱՄԵՒ ԱՐԳԵԼԱՊԱՏՆԵՆՈՎ ՓԱԿԱԾ Ե ԲԵՐՉՈՐԻ ՄԻՋԱՆՅԸ

Ատրպէյճանական կողմը 22 Յունիսին դիմած է հերթական սադրանքին ու յանցաւոր գործողութեան՝ շաղախէ արգելապատնէշով փակելով Արցախ-Դայաստան միակ ճամբան՝ Բերձորի միջանցքը: Այս մասին կը յայտնէ Արցախի տեղեկատուական շտապը:



Ատրպէյճանները բնութիւն արգելապատնէշ են տեղադրում Արցախ-Դայաստան միակ ճանապարհին՝ Լաչինի միջանցքում: Azərbaycanlılar beton bəzəkləri tək bir yolda, Arcax ilə Ermənistan arasında, Lachin koridorunda quraşdırırlar.

«Մասնորէն, ի լրումն ապօրինի անցակէտի եւ զրահամեքենաներու միջոցով ճամբու փակման՝ Ատրպէյճան այժմ ցուցադրական կերպով կը փակէ ճամբան՝ բացառելով որեւէ տեղաշարժ, ներառեալ Կարմիր խաչի եւ խաղաղապահներու կողմէ: «Այս դէպքը անգամ մը եւս կը ցուցադրէ ատրպէյճանական իշխանութիւններու յանցաւոր նպատակները՝ Արցախի ժողովուրդը ամբողջապէս մեկուսացնել արտաքին աշխարհէն եւ կիրարկել բռնաճնշումներու բոլոր մեթոտները»:

Խմբագրական

ՃԿՈՒՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Արցախի մարդասիրական իրավիճակը օրըստօրե կը ծանրանայ: Լաչինի միջանցքի փակումով ու արգելապատնեշներու կառուցումով Արցախի վիճակը վերջնականացնելու փորձ կը կատարէ Ատրպեյճանը:

Մարդու իրաւունքներու միջազգային դատարանի որոշումը, ԵԽԽՎ-ի բանաձեւը, Ռուսիոյ կողմէ հնչած Չախարովայի կոչը՝ բանալու Լաչինի միջանցքը, ցարդ ոչ մէկ դրական ազդեցութիւն ունեցած են Ատրպեյճանը ետքայլի մղելու եւ Լաչինի միջանցքը բանալու:

Ատրպեյճան փաստօրէն այս ճնշումները կը բանեցնէ արցախեան հարցը մէկընդմիշտ փակելու եւ Լաչինի փոխարէն Չանգեզուրի կամ ընդհանրապէս Սիւնիքի մէջ զիջումներ պարտադրելու շայաստանին:

Սիւնիքի գծով Էրտողան վերջերս յայտարարեց, որ Չայաստանը չէ հարցը Չանգեզուրի միջանցք ունենալու գծով, այլ՝ Իրանը: Ինչ որ կը նշանակէ, թէ այս բոլորը պիտի առաջնորդեն Չինաստանէն դէպի Եւրոպա գացող Միջին միջանցքի մը հաստատման, որ պիտի անցնի Միջին Ասիոյ թրքական աշխարհին պատկանող երկիրներու մէջէն շրջանցելով Իրանը: Թուրանական այս ծրագրի իրականացման խոչընդոտ կը հանդիսանայ Չայաստանը, որուն հարցերը Ատրպեյճան եւ Թուրքիա ճնշումով կը փորձեն լուծել, զայն նոյնիսկ խոչընդոտ չհամարելով այս իմաստով:

Միւս կողմէ, Իրան թէեւ դեմ կ'արտայայտուի տարածաշրջանի աշխարհաքաղաքական հաւասարակշռութեան խախտումին, սակայն ամէն ջանք ի գործ կը դնէ իր ներկայութիւնը պարտադրելու տարանցիկ ճանապարհներու վրայ:

Այս ուղղութեան վրայ, ոմանք տակաւին կը հաւատան, որ անվստահելի Թուրքիան կրնայ ըլլալ դէպի Չայաստան ապրանքաշրջանառութեան ճամբան բացողը: Մինչդէռ Թուրքիան կրնայ Չայաստանը մղել Իրանէն եւ Ռուսիայէն փուլային հեռացման ու ապագային յաւելեալ ճնշումներ բանեցնել Չայաստանի վրայ, աստիճանաբար իր վերահսկողութիւնը տկարացնելով իր իսկ տարածքներուն վրայ: Թուրքիոյ յարաբերութիւնները իր դրացի երկիրներուն հետ կը վկայեն այս բոլորը:

Չայաստանին անհրաժեշտ է որ կապուած ըլլայ այնպիսի պետութիւններու հետ, որոնց հետ հաւանական փոխադարձ շահեր ունի կամ կրնայ ունենալ, պայմանաւ որ իր տարածքներու վերահսկողութիւնը ոչ մէկ երկրի կամ ուժային կեդրոնի զիջի:

Ինչպէս Սիւնիքի վրայ, այնպէս ալ սահմանային կարեւոր ճամբաներու վրայ Չայաստանի վերահսկողութեան պահպանումը Եական է, որպէսզի հայկական տարածքները տարածաշրջանի երկիրներու մէջ առեւտուրի առարկայ չդառնան: Ոչ մէկ երկիր կրնայ երաշխաւորել Չայաստանի ապահովութիւնն ու գերիշխանութիւնը, եթէ հայկական պետութիւնն ու հայ ժողովուրդը տարուին գերտերութիւններու տարածաշրջանին մէջ ունեցած շահերով եւ սակարկութիւններու գերին դառնան:

Քաղաքական առեւտուրի մէջ անհրաժեշտ է պահպանել Չայաստանի գերիշխանութիւնը իր տարածքներուն վրայ, առանց միջանցքներ տրամադրելու ծուղակին մէջ յայտնուելու:

Տարածաշրջանին մէջ արտաքին ազդեցիկ ուժերու հետ ամուր խաղաքարտերով ու կայուն դաշնակիցներով գործ ունենալը հրամայական է, որուն կրնայ նպաստել նաեւ հայկական Սփիւռքը՝ իր քաղաքական ազդեցիկ օղակներով: Կարեւոր է նաեւ, դիւանագիտութեան կողքին, Չայաստանի ուժային դիրքերու ամրացումը, տարածաշրջանի ուժերուն հետ հաւասարակշռութիւն պահելու նպատակային աշխատանքը, որպէսզի պատերազմներ խուսափելու փոխարէն, կարելի դառնայ վերացնել պատերազմի հաւանականութիւնը:

«Գ.»

-Սուրիոյ կառավարութիւնը յայտարարեց, որ Չորեքշաբթի, 28 Յունիս 2023-էն մինչեւ Շաբաթ, 1 Յուլիս 2023 Սուրիոյ մէջ կառավարական բոլոր կեդրոնները արձակուրդ պիտի ունենան Ատհայի Տօնին առիթով:



-Ատհայի Տօնին առիթով, Սուրիոյ Զարիւղի եւ Զանքային Զարստութեան Նախարարութիւնը կոչ ուղղեց սուրիական նահանգներուն մէջ վառելանիւթի ընկերութիւններուն քաղաքացիներուն յատկացուած պենզի-նի բաժինը աւելցնել Ատհայի շրջանին, որպէսզի քաղաքացիներուն երթելու կը դիւրանայ, յատկապէս ճամբորդութեան պարագաներուն:



-Չամայի ոստիկանատան աղբիւր մը ՍԱՆԱ-ի հաղորդեց, որ Իտլիպի մէջ գինեալ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռներով եւ ինքնաթիռներով յարձակումներ գործեցին Չամայի արուարձանի Ղապ շրջանի Ճորին աւանին եւ անոր շրջակայքին վրայ: Աղբիւրը յայտնեց, որ յարձակումին հետեւանքով նիւթական վնասներ արձանագրուեցան:



-Սուրիոյ ներքին գործոց նախարար Սուհամմետ Ռահմուն խորհրդակցեցաւ Լիբանանի Զանրապետութեան ժամանակաւոր կառավարութեան մէջ տեղահանուածներու հարցերու նախարար Իսամ Շարաֆ ատտիին հետ՝ Լիբանանի մէջ սուրիացի տեղահանուածներուն տունդարձի միջոցներուն շուրջ, յայտնելով, որ Սուրիան այս ուղղութեամբ դիւրութիւններ կը տրամադրէ:




Իր կարգին նախարար Շարաֆ ատտիին յայտնեց, որ սոյն այցելութիւնը կը համալրէ նախորդ այցելութիւնները եւ արձանագրուած զարգացումները:

Ան շեշտեց այս հարցին շուրջ Սուրիոյ պետութեան հետ խորհրդակցութեան կարեւորութիւնը, որպէսզի դրական արդիւնքներ ձեռքբերուին:

-Սուրիական Երկրաշարժներու գրանցման ազգային կեդրոնը յայտարարեց, որ Երկուշաբթի, 26 Յունիսի 24 ժամուան ընթացքին 5 թեթեւ ցնցումներ արձանագրուեցան հետեւեալ ձեւով.

- Երկու ցնցում Իսկէնտերունի մէջ, 2,4 ռիխթըր ուժգնութեամբ:
- Ցնցում մը պաղեստինեան-յորդանանեան սահմանին մէջ, 1,9 ռիխթըր ուժգնութեամբ:
- Ցնցում մը թրքական ցամաքային բաժինին մէջ, 3,1 ռիխթըր ուժգնութեամբ:
- Ցնցում մը Կիպրոսի մէջ, 2,3 ռիխթըր ուժգնութեամբ:



## Լուրեր Հայաշխարհին

### «ԷՍ. Օ. ԷՍ. ԱՐՅԱԽ» 24-ԺԱՄՆԱՅ ՆՏԱՑՈՅՑ

ՀՀ Գերագույն Մարմինի Հանրային Կապերու գրասենյակը կը հաղորդէ, որ 27 Յունիսին ՀՀ Գերագույն Մարմինը կը նախաձեռնէ 24-ժամեայ նստացոյց՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ Դաշնութեան, Ֆրանսայի Հանրապետութեան դեսպանատուներուն եւ Եւրոպական Միութեան ներկայացուցչութեան դիմաց:

**24 ԺԱՄՆԱՅ ՆՏԱՑՈՅՑ**

- ՍՏ. ԳԵՄՊԱՆՏՈՆ
- ՈՂ. ԳԵՄՊԱՆՏՈՆ
- ՋՐԱՆՍԱՅԻ ԳԵՄՊԱՆՏՈՆ
- ԵՄ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅՑՈՒԹՅՈՆ

**SOSARTSAKH**

Նստացոյցի նպատակն է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համա-նախագահ երկիրներէն եւ Եւրոպական Միութենէն պահանջել չբաւարարուիլ լոկ յայտարարութիւններով, այլ գործուն քայլերու ձեռնարկել Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակումը ան-յապաղ վերացնելու համար:

Նստացոյցը կը կրէ «Էս. Օ. Էս. Արցախ» խորագիրը:

Նստացոյցը բոլոր վայրերուն մէջ պիտի սկսի 27 Յունիսի առաւօտեան ժամը 8:30-էն եւ պիտի աւարտի 28 Յունիսի ժամը 10:00-ին՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ ՄԱԿ-ի գրասեն-տակին դիմաց:

### ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ԱՆՏԱՐԲԵՐ ՈՒ ԼՈՒՒ ՉԷՏԵԻՒ ԱՐՅԱԽԻ ՄԵՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՍՆԵՐՈՒՆ

Մենք չենք ակնկալեր, որ այս նստացոյցով բոլոր հարցերը լուծուին, բայց առնուազն հանրային պահանջ կարելի է ձեւ-կերպել: Բողոք արտայայտելու իմաստով ասիկա մեծ անհրա-ժեշտութիւն է այս պահուն. NEWS.am-ի հետ գրոյցի ընթացքին ըսաւ ՀՀ Գերագույն Մարմինի ներկայացուցիչ, Ազ-գային ժողովի «Հայաս-տան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան՝ անդրա-դառնալով Հինգշաբթի տեղի ունենալիք մէկօր-եայ նստացոյցին:



Աւելցնենք, որ ՀՀ Գերագույն Մարմինը կը նախաձեռնէ 24 ժամեայ նստացոյց՝ Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի, Ռուսիոյ, Ֆրանսայի Հանրապետութեան դեսպանատուներուն եւ Եւրոպական Միութեան ներկա-յացուցչութեան դիմաց: Նստացոյցին նպատակն է ԵԱՀԿ Մինսքի խումբի համաձայնագրի երկիրներէն եւ Եւրոմիութենէն պա-հանջել չբաւարարուիլ լոկ յայտարարութիւններով, այլ գործուն քայլերու ձեռնարկել Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակու-մը անյապաղ վերացնելու համար:

«Մեր 120 հազար հայրենակիցները առանց բաւարար սնուն-դի, դեղորայքի կանգնած են ցեղային գտման եւ ցեղասպանութեան առջեւ, իսկ միջազգային հանրութիւնը պարտաւոր է հա-մապատասխան գնահատական տալ եւ քայլերու ձեռնարկել: Այս է մեր նպատակը՝ անտարբեր ու լուռ չհետեւիլ Արցախի մէջ տե-ղի ունեցող զարգացումներուն: Այս հարցերը լուսարձակի տակ բերելու իմաստով այս նստացոյցը կարելի է: Ձեռնարկը պիտի եզրափակուի ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակին դիմաց», ըսաւ Սաղաթէլեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչո՞ւ այս գծով կառա-վարութեան չեն դիմեր, այլ միջազգային հանրութեան, Սաղա-թէլեան յայտնեց, որ այս վիճակը ստեղծուած է օրուան իշխա-նութեան վարած քաղաքականութեան պատճառով եւ այդ ուղ-ղութեամբ նոյնպէս քայլեր պիտի ձեռնարկուին:

### ԸՆԿԵՐՎԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԻՋԱՉԱՍԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՅԱԾ Է ԱՐՅԱԽԻ ԺՈՂՎՈՒՐԴԻՆ ԻՆԵՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՌԻՆԸ

22-25 Յունիս 2023-ին Փանամայի մէջ տեղի ունեցած է Ընկերվար Երիտասարդ-ներու Միջազգային Միութեան բարձրագոյն ժողովը: Երկու տարուան պարբերակա-նութեամբ գումարուող ժողովին մասնակցած են կազմակերպութիւններ շուրջ 70 երկիրներէ՝ 300 պատուիրակներով: Բարձրագոյն ժողովին ղեկավար մարմինը կը ներկայացնէ հաշուետու զեկուցում, կը ճշդունի կազմակերպութեան ապագայ ըն-տելքները, կ'ընտրուի նոր ղեկավար մարմին: ՀՀ Երիտասարդականին կողմէ ժող-ովին կը մասնակցէին ՀՀ Երիտասարդականի անդամ Յասմին Բուրուշեանը եւ ՀՀ-ի կողմէ Ընկերվար Երիտասարդներու միջազգային միութեան փոխնախագահ Սա-րինէ Աբրահամեանը: Ժողովին կարեւորագոյն նշանակութիւն ունի բանաձեւերու ներ-կայացումն ու որոշեցումը: ՀՀ Երիտասարդականի ջանքերով Փանամայի մէջ ըն-դունուած է Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը ճանջող եւ Ատրպէյճանի կողմէ Արցախի ժողովուրդին նկատմամբ ցեղային գտման քաղաքականութիւնը դատապարտող բանաձեւ: Կազմակեր-պութիւնը կոչ ուղղած է առանց որեւէ նա-խապայմանի անյապաղ բանալ Լաչինի միջանցքը եւ վերջ դնել Արցախի շրջա-փակման: Աւելցնենք, որ Թուրքիոյ Հանրա-պետական ժողովուրդի Կուսակցութեան Երիտասարդական թեմի լիիրաւ անդա-մակցութեան դիմումը մերժուած է՝ մաս-նաւորապէս կազմակերպութեան Հայոց Յեղասպանութեան, Արցախի ժողովուրդի ինքնորոշման, քրտական փոքրամասնութեան իրաւունքներու եւ Թուրքիոյ մէջ սուրիա-ցի տեղահանութեան մասին դիրքորոշումներուն պատճառով: Ժողովի աւար-տին կայացած է նոր նախագահութեան ընտրութիւն, որուն հիմամբ ՀՀ Երիտա-սարդականի թեմակազմը Սարինէ Աբրահամեան վերընտրուած է Ընկերվար Երիտա-սարդներու միջազգային միութեան փոխնախագահ: Սարինէ Աբրահամեան մեկնա-բանելով ընդհանուր ժողովը ըսած է. «Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միութեան նախագահութեան մէջ վերընտրութիւնը պատիւ է եւ պարտաւորեցնող: Միութիւնը ազդեցիկ հարթակ է մեր ազգային շահերը բարձրացնելու եւ քաղաքա-կան այլ ուժերու հետ կապեր ստեղծելու: Միութեան ընդհանուր ժողովին մէջ ՀՀ Երի-տասարդականի արձանագրած յաջողութիւնները ուղերձ են առ այն, որ ՀՀ Երի-տասարդականը բոլոր բնագաւառներուն մէջ կը շարունակէ ազգային խնդիրներու շուրջ պայքարը»: Յիշեցնենք, որ Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միու-թիւնը Ընկերվար միջազգայնականի ուղեկից Երիտասարդական կազմակերպութիւնն է, որուն կ'անդամակցին աւելի քան 163 կազմակերպութիւններ՝ աշխարհի շուրջ 110 երկիրներէ: ՀՀ Երիտասարդականը Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միութե-ան լիիրաւ անդամ է:



Նաւորապէս կազմակերպութեան Հայոց Յեղասպանութեան, Արցախի ժողովուրդի ինքնորոշման, քրտական փոքրամասնութեան իրաւունքներու եւ Թուրքիոյ մէջ սուրիա-ցի տեղահանութեան մասին դիրքորոշումներուն պատճառով: Ժողովի աւար-տին կայացած է նոր նախագահութեան ընտրութիւն, որուն հիմամբ ՀՀ Երիտա-սարդականի թեմակազմը Սարինէ Աբրահամեան վերընտրուած է Ընկերվար Երիտա-սարդներու միջազգային միութեան փոխնախագահ: Սարինէ Աբրահամեան մեկնա-բանելով ընդհանուր ժողովը ըսած է. «Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միութեան նախագահութեան մէջ վերընտրութիւնը պատիւ է եւ պարտաւորեցնող: Միութիւնը ազդեցիկ հարթակ է մեր ազգային շահերը բարձրացնելու եւ քաղաքա-կան այլ ուժերու հետ կապեր ստեղծելու: Միութեան ընդհանուր ժողովին մէջ ՀՀ Երի-տասարդականի արձանագրած յաջողութիւնները ուղերձ են առ այն, որ ՀՀ Երի-տասարդականը բոլոր բնագաւառներուն մէջ կը շարունակէ ազգային խնդիրներու շուրջ պայքարը»: Յիշեցնենք, որ Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միու-թիւնը Ընկերվար միջազգայնականի ուղեկից Երիտասարդական կազմակերպութիւնն է, որուն կ'անդամակցին աւելի քան 163 կազմակերպութիւններ՝ աշխարհի շուրջ 110 երկիրներէ: ՀՀ Երիտասարդականը Ընկերվար Երիտասարդներու Միջազգային Միութե-ան լիիրաւ անդամ է:

### ՉԱՆԱՐՈՎԱԿ «ԿՈՉ ԿՈՒՂՂԵՆՔ ՊԱՔՈՒՆ ԱՄԲՈՂՉՈՒԹԵԱՐ ԱՊԱՇՐՉԱՓԱԿԵԼՈՒ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՃՔԸ ԵՐԹԵԿԵԿՈՒԹԻՒՆԸ»

Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան մամլոյ խօսնակ Մարիա Զախա-րովա, մեկնաբանելով Լաչինի միջանցքին տիրող իրավիճակը յայտարարած է, թէ անտրպէյճանական կողմէն Լաչինի միջանցքի մուտքի արգելափակումը կը խախտէ Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Հայաստանի դեկլարացիաներուն 9 Նոյեմբեր 2020-ի յայտա-րարութեան դրոյթներուն:

Յայտարարութեան մէջ նաեւ ըսուած է. «Նման քայլեր կը յանգեցնեն լարուա-ծութեան աճին եւ չեն նպաստեր Ռուսիոյ օգնութեամբ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին շուրջ բնական մթնոլորտի պահպանման: Կոչ կ'ուղղենք Պաքուին ամբողջութեամբ ապաշրջափակելու Լաչի-նի միջանցքէն երթելու խնդիրը»:



Յոյս ունինք նաեւ, որ Երեւան դուրս չի գար եռակողմ ձեւաչափերով փոխգործակ-ցութենէն: Կողմերու ջանքերուն կասեցումը բացասաբար կ'անդրադառնայ տարա-ծաշրջանի իրավիճակին եւ կը յանգեցնէ տեղական հարցերու: Նշած ենք համապա-տասխան յանձնաժողովին հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման ուղ-ղութեամբ համաչափ աշխատանքին կարեւորութիւնը: Պատրաստ ենք տրամադրե-լու անհրաժեշտ խորհրդատուական օգնութիւն:

Մենք կը կրկնենք մեր կոչը երկու կողմերուն՝ Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Հայաս-տանի եռակողմ համաձայնագրերը ամենաբարձր մակարդակով, բժախնդրորէն պահ-պանելու, Լաչինի միջանցքի տարածքին անվտանգութեան ապահովման համար գապուածութիւն եւ պատասխանատուութեան գիտակցութիւն ցուցաբերելու:

Ռուսական կողմը պիտի շարունակէ աշխույժ ջանքեր գործադրել՝ Պաքուի եւ Երե-ւանի հետ հանդիպումներով իրավիճակը կարգաւորելու համար»:

## ՆԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ Է Ա. ԱՆԱԲՈՐ ՓՈԹՈՐԻԿՆԵՐՈՒ ԵՆԹԱՊԱՏԿԵՐԻՆ ԱՌՋԵՒ



U. Vahabzadeh

### Նախաբանի Պես

Այս եւ յաջորդելիք սիւնակներուն մէջ, ընթերցողս շնորհալի նորութիւններ պիտի չտեսնէ, ո՛չ ալ՝ անհիւի կամ վառօդի գիտոք: Այս սիւնակներուն նպատակն է մօտաւոր եւ, բնականաբար, ո՛չ լիակատար ուրուագծում մը կատարել այն իրադարձութիւններուն եւ անոնց գտած արձագանգներուն, մեկնաբանութիւններուն, արծարծուած անկեղծ առաջադրանքներուն, որոնք կը յուզեն Յայաստանն ու ողջմիտ՝ հայրենիքի լինել-չլինելուն հարցականներով մտահոգ հայը: Փորձ՝ առօրեայէն քիչ մը աւելի լայն ծիրի մէջ դիտելու կացութիւնը:



հորքին մէջ, արձանագրուելիք մտահոգութիւններն ու առաջադրանքները երկարատեւ ի վեր կը տողանցեն հայութեան քաղաքական կեանքին մէջ, հայրենի հողին վրայ եւ Սփիւռքի տարածքին: Յատկապէս 44-օրեայ պատերազմէն ասդին, Յայաստանի «գետնի վրայ» զարգացումները կը շարունակուին գահավէժ ընթացքով, արագօրէն իրարու յաջորդող փուլերով, որոնք մեր հայրենիքը կը տանին նորանոր կորուստներու: Ահագանգեր կը հնչեն, թէ պետութիւնն ու հայրենիք կորցուցան սեմին հասած են...: Ու թէեւ մեր նշումներն ու դիտարկումները առաւելաբար պիտի ընդգրկեն Յայաստանի ու հայութեան կեանքը, այսուհանդերձ, չենք կրնար, կարելի՛ չէ անտեսել այն դէպքերն ու աշխարհաստան գարգացումները, որոնք տեղի կ'ունենան մեր հայրենիքին անմիջակայ դրացնութեան մէջ եւ շատ աւելի հեռուները տարածուող հորիզոններու տակ: Փաստօրէն, աւելի քան մէկ տարիէ ի վեր շատ աւելի յստակ դարձած է, որ Գ. Աշխարհամարտ մը տեղի կ'ունենայ... մասնավճարներով: Նախորդ տասնամեակին, քիչ թէ շատ քողարկեալ այդ աշխարհամարտը հիմա կը մղուի բացայայտօրէն, դիմակները ընդհանրապէս վար առնուած են: Մեր անմիջական դրացնութեան մէջ համաթուրանական ծրագիրի վերաշխուժացումը, Իրանի շուրջ հիւսուող ճնշումները, անդին՝ Ուքրաինայ պատերազմը, համայնավար կայսրութիւնը ժառանգորդ Ռուսիան նորանոր օղակներու մէջ սեղմելու ճիգերը (Ուքրաինիան միայն մէկ օղակն է. երբ այս սիւնակներուն վերջին հպումները կը կատարելիք, միջազգային մամուլը ողորդուցաւ «Ռուսիան ներսէն պիտի պայթի»-ի մեկնաբանութիւններով, ի լուր «Վակներ» խմբակին ստեղծած փոթորիկին), Միացեալ Նահանգներու գլխաւորութեամբ՝ Չինաստանի դէմ շարժումները եւ նման «ակներեւ իրադարձութիւններ» (առանց անտեսելու ինքզինք հակասելու արտայայտութիւնները) ձեւով մը շուքի մէջ կը ձգեն ո՛չ նուազ կարեւորութեամբ զարգացումներ, որոնք նշումներուն բիրտ սաստկութիւնը չունին, սակայն կը շարժին նոյն հովիտներուն ազդեցութեամբ: Այս վերջիններէն կարելի է թուել Իրան-Սեւեռական Արաբիա, հետեւաբար նաեւ Ծոցի երկիրներու եւ նոյն օղակին մէջ իսկող արաբական երկիրներու միջեւ մերձեցումի փորձերը, ափրիկեան եւ հարաւ-ամերիկեան երկիրներու հետ գործակցական կապերը խորացնելու Ռուսիոյ քայլերը, Արեւելեան Եւրոպայի մէջ հին վերքերու վերաբացման փորձերը, նոյնիսկ Եւրոպացի դաշնակիցներու միջեւ հակադրութիւններն ու մրցակցութիւնները (որոնք կը զարգանան ամերիկեան շահերու ազդեցութեան թեր ու դէմ հիծերու վրայ), Ծայրագոյն Արեւելքի մէջ հին հակադրութիւններուն նոր շապիկ հագցնելու փորձերը...: Ասոնց գուգահեռ՝ յակակն-անուակն թշնամի յայտարարուած երկիրներու եւ խմբաւորումներու միջեւ կը հաստատուին ու կը վերանորոգուին գործակցական կամուրջները, մաս մը՝ բացայայտ, ուրիշներ՝ «սեղանին տակէն»...

Այս ու նման զարգացումներ պիտի կազմեն ենթապատկերը մեր դիտարկումներուն եւ քննարկումի փորձին: Պիտի չմտնենք այդ բոլորին մանրամասնութիւններուն մէջ, սակայն մտահան պիտի չընենք այդ բոլորը, նկատի ունենալով, որ երեւոյզ ու նուազ տեսանելի մրցակցութիւնները՝ առաւել կամ նուազ չափով՝ իրենց ներգործութիւնը ունին նաեւ մեր հայրենիքին վրայ: Յայաստան, որ մինչեւ քան մը տարի առաջ ձեւով մը լուսանցքային դիրք ուներ տաք եւ յարատեւող տագնապներու բեմին վրայ, հիմա դարձած է կիզ-ա-կետ մը, եւ այդ «կիզ»-ը ահաւոր կերպով կ'այրէ մեր հայրենիքը:

Բացայայտ է, որ աշխարհը ինկած է մեծ ու փոքր դաւադրութիւններու այիքներու (դուք ըսե՛ք՝ մրցակցութիւններու) գիրկը. հայրենի գետնի վրայ եղածները յաճախ մեզի ըսել կու տան, որ Յայաստանն է դաւադրութեանց թիրախը, մինչդեռ Յայաստանը միայն մէկ օղակն է թիրախներուն, որոնք շարժման մէջ մտած են ու կը մտնեն պետական շահերու միջեւ մրցակցութիւններու հետեւանքով, իսկ թէ երեւոյթներէն անդին նայինք, պէտք է տեսնենք, որ մղիչ ուժերը շատ աւելի վեր են անհատ պետութիւններէն, անոնք ըլլան արեւելեան թէ արեւմտեան, դաշնակիցներ թէ հակառակորդներ: Եւ այդ ուժերը՝ գեր-մեծապետական խմբաւորումներ են, բացառապէս շահակցութիւններու շուրջ կազմուած դաշնակիցներ եւ մրցակիցներ, որոնք իրենք գիրենք կը քողարկեն այս կամ այն երկրի իշխանութեան կամ դաշինքին անուան տակ, սակայն խորքին մէջ, անոնք են երկիրներն ու դաշինքները իսկապէ՛ս կառավարողները, շարժման մէջ դնողները կամ շարժումներ արգելակողները: Կը բաւէ միայն յիշատակել, որ նոյնիսկ Ուքրաինայ պատերազմին մէջ հրապարակաւ եւ սուր կերպով իրարու հակադրողներ, բեմին այս կամ այն քուլիսին մէջ, ինչպիսի՛ գործակ-

ցութիւններ կը մշակեն ու կ'իրականացնեն, այնքան մը, որ մարդս երբեմն հարց կու տայ, թէ ուղղակի եւ անուղղակի զինեալ ճակատումի մէջ եղողներ ինչպէ՛ս կրնան գործակցութիւն տարածել՝ նմանապէս ուղղակի եւ անուղղակի միջոցներով: Դարց կը ծագի նաեւ, թէ խաղաղարար ճիգեր ինչո՞ւ կ'արգելակուին, կը ստեղծուի մինչեւ իսկ նստած ճիւղ սղոցելու վիճակ...

Ինչպէս նշեցինք, մեր քննարկումներուն եւ դիտարկումներուն ընթացքին, մի՛շտ ալ ի մտի պիտի ունենանք մեծ ու փոքր կարկիններով կազմուած օղակներ, որոնք երբեմն կը թուին ունենալ նոյն կեդրոնը, բայց յաճախ շրջանակները իրար կը կտրեն, կը խաչաձեւեն, իսկ այդ խաչաձեւումներուն վրայ ինկող երկիրներ ու շրջաններ կը դառնան մեծագոյն տուժողները, վնասուողները:

Մեր Յայաստանը, կամայ թէ ակամայ, ցատկած ու նստած է օղակներու խաչաձեւման կետերէն մեկուն վրայ: Սա... նորութիւնն է: Դիտարկել ի վեր, Յայաստան գտնուած է միջ-ցամաքային խաչմերուկի վրայ, մեր պատմութեան մէջ յաճախ հանդիպած ենք «կռուախնձոր» պատկերին: Այսօր ալ Յայաստանը կռուախնձոր-թիրախ մըն է, անմիջակասօրէն՝ թուրք-ազերիական ախորժակներու, իսկ եթէ օղակը տարածենք՝ ռուսական, իրանեան, արեւմտեան եւ արեւելեան շահերու պատճառով: Յստակ շարժում կայ Ռուսիան Կովկասէն եւ այլ շրջաններ վանելու, Իրանի պաշարումը աւելի եւս խստացնելու: Կռուախնձոր Յայաստանը անցեալին ծակը վնասներ կրած է նման վիճակէ, մատուած է օրհասական կացութեան, լինել-չլինելու վտանգի դիմաց եղած է, սակայն նաեւ յաջողած է կտրել «Գորդեան հանգոյց»-ներ եւ վերապրիլ, պետութիւն վերականգնել, հայապատկան հողերու վերատիրանալ, պետական կառոյցներ ստեղծել եւ այլն: Այսօր, դարձեալ կը գտնուինք օրհասական վիճակի մէջ, մեր հայրենիքը, հետեւաբար նաեւ ողջ հայութիւնը կը դիմագրաւեն լինելութեան մարտահրաւերներ: Եթէ հաւատարիմ ենք վերապրելու մեր անակոյն, պարտաւոր ենք կտրել նաեւ այսօրուան «Գորդեան հանգոյց»-ը եւ ապահովել հայրենիքին ու ազգին վերապրումը, գոյատեւումը:

### Անյետաձգելի Յրամայականներ

Մեր առաջին տողերուն մէջ, նշեցինք, որ նորութիւններ պիտի չարձանագրենք: Վերի բաժինը ապացուցեց այդ հաստատումը:

Յաջորդ հաստատումն ալ նորութիւն պիտի չըլլայ: Ինչպէս անցեալին, նոյնպէս ալ այսօր, յատկապէս 44-օրեայ պատուհասէն ասդին, Յայաստանէն մինչեւ Արցախ եւ սփիւռքեան մօտակայ ու հեռակայ ափեր, հնչած է եւ համապատասխան արձագանգներ գտած՝ անվիճելի ճշմարտութիւն մը, որ կրկին ու կրկին կը շեշտէ անյետաձգելի հրամայականները. ՅԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՊԱՅՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԿԱՐՕՏԻՆ ՄԻԱՄԱՆՈՒԹԵԱՆ, ԲԱԶԿԻ ԵՒ ՄԻՏՔԻ ՈՒԾԻ ԿԵՂՐՈՒՄԵՆ, ՉԱՆՈՆԸ ԴԻՄ ԾԱՌԱՅԵՑՆԵՐՈՒ ԲԱԶՄԱԾԻԻՒ ԵՒ ՅԱՄԱՊԱՐՓԱԿ ԾՐԱԳԻՐԻ (կը մանրամասնենք աւելի ուշ):

Այս մարտահրաւերը եթէ 2020-ի Սեպտեմբեր-Նոյեմբերէն առաջ ունէր յըստակ «դիմագիծ» (Եւրօնը նոյնն էր), անկէ ետք ստացաւ տարբեր եւ շատ աւելի ուժեղ հնչեղութիւն: Ինչեղութեան պատճառները բազմաթիւ էին եւ այդպէս ալ կը մնան: Նախ՝ պատերազմին ահաւոր վնասները՝ բանակին ու Արցախին հասած հարուածները, հողային կորուստներ, քանդումներ, փոշիացումներ, զուգահեռաբար, քաղաքական-դիւանագիտական նահանջներ եւ կորուստներ, առանց մոռնալու տնտեսական եւ ընկերային վատ հետեւանքները, որքան ալ որ իշխանութիւնները փորձեն հանրութիւնը համոզել, որ Յայաստան «անսախընթաց բարելաւումներ» կ'ապրի (մինչեւ իսկ եթէ որոշ տեղ բարելաւում կայ, յայտնի է, որ նժարին ո՛ր ափը վար կը քաշէ):

Ամէն օր հնչող յիշեալ մարտահրաւերները ստեղծեցին բարեշրջական՝ գործնական քանի մը այիք, սակայն կառքը պահանջուածին չափ տեղէն չէ շարժած ցարդ, այն իմաստով, որ եղածը պահպանելու եւ կորուսածին վերատիրանալու հորիզոնները մատուած են անորոշութեան եւ կը մնան վտանգի տակ: Գործնական ալիքներն էին Յայրենիքի փրկութեան շարժումն ու անոր յաջորդած հրապարակային համախմբումները, խաղաղ ցոյցերը, իշխանութեան ուղղուած՝ զգաստութեան եւ սխալ ընթացքէ ետդարձ ընելու հրաւերները: Այդ ալիքները մերթ յուստու նշաններ ի յայտ բերին, սակայն ծանօթ պատճառներով՝ տեղական եւ արտաքին ազդեցութիւններու բերումով՝ չհասան «բարելաւոյ հրուանդան»: Յայրենիքի ճակատագիրով հետաքրքրուած ու անոր պահպանումին նախանձախնդիրներ մինչեւ այսօր ալ կը շարունակեն խաղաղ պայքարը (կ'ուզենք այստեղ շեշտը դնել պայքարին խաղաղ բնոյթին վրայ, որովհետեւ բոլորն ալ գիտեն, որ այլընտրանքը՝ քաղաքացիական կործանարար պատերազմն է, բոլորն ալ գիտեն, որ նախընթաց փորձերը ուրկէ՛ քաջալերանք ստացան...): Վերջին ամիսներուն, հրապարակ եկան նոր համախմբումներ, որոնք շարքին եր նահատակներ տուած ընտանիքներուն համախմբումը, քաղաքական, մտաւորական, արուեստի մարդիկ մէկտեղող մէկէ աւելի նոր միաւորներ եւ խմբաւորումներ, քուէահաւաքի նախաձեռնութիւն եւ այլն: Դոն կան խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմադիրներ, իրենք գիրենք քաղաքական որեւէ խմբակցութենէ կամ կուսակցութենէ հեռու պահողներ (յաճախ ընդունադատութեան սլաքներ ալ կ'ուղղուին ընդդիմադիրներուն հասցէին, անուղղակիօրէն լուսարձակներ հեռացնելով բուն յանցաւորներէն), մինչեւ իսկ այնպիսիներ, որոնք մինչեւ մօտիկ անցեալ կը յայտարարէին, թէ իրենք քաղաքականութեամբ չեն հետաքրքրուած, եւ սակայն, արդէն գիտակցաբար կամ անգիտակցաբար՝ ահաւասիկ կ'առնեն ըստ եւութեան ԶԱՂԱԶԱԿԱՆ քայլեր: Եւ իսկապէ՛ս, ինչպէ՛ս կարելի է երկրին ու ազգին ներկայ պայմաններուն մէջ հեռու մնալ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿԵՂՐՈՒՄԵՆ, այդքան նեղցնել «քաղաքականութեամբ զբաղելու» սահմանները, մոռնալ, որ քաղաքական տեսութիւններու ծննդոցի օրերուն իսկ, մեծ փիլիսոփայ մը՝ Արիստոտել ըսած է. «Մարդս քաղաքական կենդանի (արարած) մըն է»: Յետոյ, քաղաքականութիւնը կը զբաղի... ամենէն անտարբերով իսկ, մինչեւ իսկ անոնցմով՝ որոնք կը բաւականանան ընթացիկ վայելքներով:

Խորքին մէջ, նախընթաց եւ նոր օրերու այդ համախմբումները, անվիճելիօրէն՝ հայրենիքի փրկութեան եւ պահպանման ի խնդիր քով-քովի եկողները այլ տեսակի «Գորդեան հանգոյց» մը ստեղծած են. ԿԸ ՊԱԿՍԻ ԱՅՐ ԲՈՒՆՈՐԸ ԶԱՄԱԿՍԲՈՐՈՒ ՄԻԱՌՈՐԸ, այնպէս՝ ինչպէս նշաւ, մօտաւորապէս, Յայրենիքի փրկութեան շարժումի մեկնակետին, ապա՝ յաջորդած հանգրուաններու:

## «ՈՎՔԵՐ ԵՆ ՍՊԱՆԵԼ ՁԵՄԱԼ ՓԱՇՎԱՅԻՆ»



Գրիգոր Տունկեան

Տրամադրութեանս տակ ունիմ «Ովքեր են Սպանել Ձեմալ Փաշային» գիրքին երրորդ հրատարակութենէն օրինակ մը, որուն հեղինակն է Լոռիի Շահնագար, ներկայիս՝ Մեծաւան գիւղը ծնած Միքայէլ Սողոմոնի Այվազեանը, որ դեռ պատանի՝ լքելով հայրենական գիւղը հաստատուած է Թիֆլիս եւ զբաղած լրագրութեամբ:

1915-ին միացած է կամաւորական Ա. գունդին:

Գիրքը կը ներկայացնէմ յարգելի ընթերցասերներուն, նորատիպ մը ներկայացնելու սովորական ձեւաչափերէն անդին որոշ մանրամասնութիւններով, որովհետեւ՝ ժամանակի փոշիներէն ազգային հպարտութիւն ներշնչող պատմութիւն մը լոյս աշխարհ բերող եւ պատմութիւն ունեցող գիրք մըն է ձեռքիս:

Յետախուզական, քննական լրագրութեան օրինակ հանդիսացող աշխատութիւն մըն է ան, որ գեղարուեստական գրական երկ մը չլլալով հանդերձ, հեղինակի լայն դիտադաշտի մանրամասն նկարագրումներով ընթերցողը կը վերածէ տեսաժապաւեն դիտողի, որ ինքզինք մէկ մասնիկը կը զգայ գործողութիւններու դաշտին:

Յեղինակը իր հիմնական նիւթին առընթեր, թանկագին տեղեկութիւններ կը փոխանցէ պրպտումներուն ընթացքին հաւաքած Բաբերդ, Խոտորջուրի հայութեան 1915-ի ինքնապաշտպանութեան կռիւներու կազմակերպման, տեղահանութեան եւ կոտորածներու պատմութեան մասին: Կը յուսամ, որ այս բաժինը լրամշակուով, օր մը արժանանալով առանձին հրատարակութեան, կը համալրէ 1915-ին մղուած հերոսամարտերու պատմութիւնը:


Մ.Ա. անդրադարձած է նաեւ առաջին աշխարհամարտին, պաղեստինեան ճակատին վրայ ճեմալ Փաշայի կողմէ հայ գաղթականութեան հանդէպ գործադրուած գազանութիւններուն:

Ահմէտ ճեմալ Փաշան Սուրիոյ եւ Լիբանանի պատմութեան մէջ ծանօթ արիւնահեղ նոյն ճեմալ Փաշան է՝ Դամասկոսի եւ Պէյրութի մէջ ազատականները կախաղան բարձրացնող:

Յեղինակը իր նիւթին առնչակից տուեալներու պրպտումին եւ հաւաքին սկսած է 1923 թուականին, նիւթի ամբողջացման համար տրամադրած է շուրջ յիսուններկու տարի, գործած է վտանգաւոր պայմաններու մէջ հնարաւոր գաղտնապա-

հուրեամբ:

Յեղասպանութեան վաթուսամեակին աւարտած հեղինակային այս կոթողական գործը կարելի չէր հրատարակել Խորհրդային Միութեան օրերուն: Այդ իսկ պատճառով հեղինակը բնագիրը յանձ-



ՍիբիւժէԼ ԱՅՎԱԶԵԱՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ՍՊԱՆԵԼ ՁԵՄԱԼ ՓԱՇՎԱՅԻՆ

նած էր իր վստահելի ազգականին՝ Առաքել Աւետիսեանին, որպէսզի պահէ գայն ապահով իր տան նկուղը:

Մեքենագիր բնագրին վիճակուած էր քառասուն տարի թաքստոցի մէջ մնալ, մինչեւ որ 2015-ին, երբ այլեւս չկային արգելակող պայմանները եւ արդէն մահացած էր Միքայէլ Այվազեանը, իր թոռները Յրանդ, Մարինա, Նունէ եւ Գայիանէ բացայայտելով իրենց մեծ հօր աշխատութեան բնագիրը կ'որոշէին գայն հրատարակելով արժանին հատուցած ըլլալ իսկական Յայուն՝ Մ.Ա. -ի յիշատակին: Գիրքը առաջին անգամ լոյս տեսած է 2015-ին, իսկ երկրորդ անգամ լրամշակուած կերպով 2016-ին, Երեւան, Ֆինոմէն հրատարակչատունէն:

Գիրքը երրորդ անգամ հրատարակուած է 2020-ին, Պէյրութ, Յամագայիինի «Վահէ Սէթեան» տպարանէն: Խմբագիրն է Կարօ Յովհաննեսեան:

Երրորդ հրատարակութեան առիթով բնագիրին ուղղագրութիւնը վերածուած է Մեսրոպեանի, ինչպէս նաեւ գիրքին աւելցուած է նիւթին հետ անմիջական աղերս ունեցող Աղասի Ազիզեանի «Արխիւային Վաւերագրեր Ձեմալ Փաշայի Սպանութեան Մասին» ուսումնասիրութիւնը:

Գիրքը կը բաղկանայ 19x13 սմ. չափի 285 էջերէ:

Յեղինակը տեղեկահաւաքի վտանգալից գործը կատարած է հնարաւոր գաղտնապահութեամբ,

յանուն պատմական ճշմարտութեան բացայայտումին եւ փաստագրումին: Առ այդ, հատորը կը ներկայանայ մեզի ոչ միայն որպէս պատմութիւն դարձած եղելոյթի մը համապարփակ նկարագրութիւն, այլեւ կը դառնայ անոր վաւերական փաստագրումը:

Յեղասպանութեան պատասխանատու այլ յանցագործներու արդարահատոյցները աւելի ուշ յուշագրութիւններով տուած են իրենց գործողութիւններու մասին որոշ նկարագրութիւններ եւ մանրամասնութիւններ, սակայն ճեմալ Փաշայի հատուցարարները երկար ժամանակ Չեկային աչքէն թաքնուած մնացած ըլլալու հետեւանքով եւ հաւածանքներու տեղի չտալու համար չեն ունեցած յուշագրութիւններ եւ հրատարակումներ: Մ.Ա. -ի այս աշխատութիւնը առ այժմ միակ համապարփակ պատմութիւնն է, ուր

կը նկարագրուի եւ կը փաստագրուի, որ արդարահատոյցները խոտորջուրի երեք հայորդիներ են՝ Արտաշէս Գեորգեան, Ստեփան Շադիկեան, Պետրոս Տէր Պողոսեան, ինչպէս նաեւ 21 Յուլիս 1922-ին, երեկոյեան ժամը 10:00-ի մօտ, Թիֆլիսի Պետրոս մեծ փողոցի մէջ, Չեկայի շէքըն ոչ-հեռու անոց իրականացուցած յանդուգն գործողութիւնը, ՅՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի գաղտնի որոշման հիման վրայ, ՅՅԴ Ամերիկայի ԿԿ-ի նախաձեռնած Նեմեսիս ծրագրի որպէս մէկ օղակը, ՅՅԴ Վրաստանի ԿԿ-ի կազմակերպումով:

Իրականութեան չեն համապատասխաներ հետագային քաղաքական տարբեր հոսանքներու կողմէ վերջինս որդեգրելու նկրտումները, նոյնիսկ, որպէս իրագործողներ խորհրդային իրաւական ատեաններ ներկայացող անձերու ստապատիր խոստովանութիւնները:

### ՍՐԲԱՅԱՆ ՅՕՐ...

Սկիզբ՝ էջ 1

Խօսուեցաւ «Գանձասար»-ի դերին մասին, որպէս համայնքի բովանդակ կեանքի հայելին: Անդրադարձ կատարուեցաւ առցանց եւ տպագիր մամուլի յատկութիւններուն, ինչպէս նաեւ երիտասարդ աշխատակիցներ խրախուսելու կարելութեան:

Այնուհետեւ անդրադարձ կատարուեցաւ Յայաստանի եւ տարածաշրջանի քաղաքական գարգացումներուն, հարցերու պարզաբանման մէջ Յայրենի եւ սփիւռքահայ

լրատուամիջոցներու կարեւոր դերին:

Խմբագիր Չարմիկ Պօղիկեան համառօտ ակնարկով մը ներկայացուց «Գանձասար»-ի 30-ամեայ երթը եւ երկրի ներկայ պայմաններուն հետեւանքով յառաջացող դժուարութիւններու յաղթահարման ջանքերը:

Սրբագան հայրը մամուլը համայնքի գարկերակը համարելով յորդորեց շարունակել երիտասարդ գրիչներու ներգրաւումը եւ բարի երթ մտղթեց «Գանձասար»-ին:

Ձերմ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին ներկայ էին նաեւ «Գանձասար»-ի վարչութեան ներկայացուցիչները:

### ՆԱՅՐԵՆԻՔԻ...

Սկիզբ՝ էջ 4

Միացնող օղակին կազմաւորման յապաղումը, որքան ալ վնասակար, ունի ներքին եւ արտաքին բազմաթիւ պատճառներ: Մէկ կողմէ, կայ իշխանաւորներու խմբակին քարոզչական մեքենան, որ «երկաթ մուրճ»-ը կը գործածէ՝ հաւաստելու, որ իր ընտրած ուղին միակ կարելին է, այլընտրանքը՝ պատերազմ է եւ նորանոր կորուստներ, «հիւներուն» վերադարձը եւ այլն: Կ'արժէ՞ կրկնել, որ այս հաւաստիքները առնուազն թերի են եւ անճիշդ: Երբ կը տեսնենք եւ կ'ընդունինք, որ ստեղծուած է կացութիւն, ուր կը տիրէ «անտառի օրենք»-ին մէկ տարբերակը, «միայն ուժեղները կրնան գոյատեւել» խօսքը վերանորոգ հնչեղութիւն ստացած է:

Բայց ինչպէ՞ս կտրել այսօրուան «Գորդեան հանգոյց»-ը, վերահունարել արդիւնաւոր պայքարի անբեկանելի երթը, պայքար՝ որ պիտի ունենայ երկու զլխաւոր ճիւղաւորում: Ներքին՝ իշխանաւորներու սխալները ուղղելու եւ անձնատուական, կործատաբեր ընթացքին վերջ դնելու գիծը, եւ արտաքին՝ այլոց շահադիտական հաշիւները եւ անոց ստեղծած ալիքները ըստ կարելւոյն չեզոքացնելու եւ Յայաստանին ու հայութեան ի նպաստ դարձնելու նպատակը:

Յաջողական սիւնակներով, պիտի փորձենք հպանցիկ ակնարկներով եւ նշումներով անդրադառնալ Յայաս-

տանի ու հայութեան կեանքի վերականգնումի տարբեր եւ գիրար ամբողջացնող կալուածներուն: Մեր հիմնական մեկնակէտն ու սեւեռակէտը պիտի ըլլայ (կրկնենք) ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ գործնապաշտ այնպիսի՝ ձեւաւորում, որ ըլլայ համապատասխան ներկայի վիճակին եւ անկէ բխող պահանջներուն: Իբրեւ անմիջական, անյետաձգելի եւ զլխագիր հրամայական, կ'ուզենք շեշտը դնել հայութեան բոլոր կարողութիւնները համախմբող ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ ՎԱՐՉԱԽՈՒՄԲԻ մը կազմութեան պահանջին վրայ, վարչակազմ՝ որ պիտի գայ փոխարինելու ձախաւերներու եւ կործանարարներու այժմու վարչախումբը: Վարչախումբ՝ որ պիտի ըլլայ այս կամ այն կուսակցութեան կամ համախմբումին «մենաշնորհը»: Վարչախումբ, որ հրապարակէն վանէ «հին»-«նոր»-ի տրամաբանութիւնը, դարմանէ ներքին թշնամանքները, բոլորին ձեռքերը միացնէ իր շուրջը, ունենայ ԲՈՒՆՈՒՆ ԱՆՎԵՐԱՊԱՅԱԿԱՅԻՆՈՒ ՄԵՐ ԽՕՍՔՔԻ չի վերաբերի իտեալական, երագային ծրագրի մը, այլ, այսօրուան պայմաններուն հարկադրած՝ անխուսափելի նուազագոյնին:

Յաջողի, աւելի մանրամասն կ'անդրադառնանք «իտեալական վարչախումբ»-ի յատկանիշներուն եւ ընելիքներուն, գործնական քայլեր՝ որոնք դարձած են աւելի՞ քան անյետաձգելի, որեւէ դանդաղում՝ պիտի նշանակէ հողային ու մարդկային նոր կորուստներ:

## Թուրքիոյ նուրջ

### ԹՈՒՐԷ ՎԵՐՈՒԾԱԲԱՆԸ՝ ԹՈՒՐԷ-ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ HAKIM ՇԱՍԱԿԱՐԳԻՆ ՄԱՍԻՆ. «ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԻՐԱՆԻ ԴԵՄ ԹՈՒՐԷԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՇՆՈՐՀԷ՛»

Թուրքիա եւ Ատրպեյճան յառաջիկային պիտի սկսին օգտագործել ASELSAN-ի արտադրութեան HAKIM օդային հրամանատարութեան կառավարման համակարգը: Այս մասին կը յիշուի թուրք սիւնակագիր Սերթաջ Աքսանի յօդուածին մէջ, որ հրապարակուած է պետական TRT լրատուամիջոցով:



Յօդուածի հիմքը Թուրքիոյ Նախագահի աշխատակազմի պաշտպանական արդիւնաբերութեան վարչութեան պետ Յալուք Զեօրքիւնի խօսքերն են, որոնք հնչած էին օրեր առաջ, ատրպեյճանական Polygon.az-ին տուած հարցազրոյցին ընթացքին:

«HAKIM օդային հրամանատարութեան կառավարման համակարգի Նախագիծը Ատրպեյճանի եւ Թուրքիոյ զինուորական յառաջընթացի ամենակարեւոր Նախագիծերէն մէկն է: Այս Նախագիծով կ'ապահովուի Ատրպեյճանի օդային տարածքի վերահսկողութիւնը, եւ երկու երկիրներու օդային համակարգերը կ'ունենան միատեղ գործողութիւններ իրականացնելու կարելիութիւն»:

Անոր համաձայն, եթէ այս Նախագիծը լիովին իրականացուի, միատեղ օդային տարածքի վերահսկողութեան տարածքը կ'ընդլայնի Էկեթան ծովէ մինչեւ Կասպից ծով:

Յօդուածին համաձայն, համակարգը տեղեկութիւն կը ստանայ բազմաթիւ ռատարներէ, բոլոր տեղեկութիւնները կը հաւաքուին Եսքիշեհիրի կեդրոնին մէջ, իսկ երկու երկիրներու հաւանութեան պարագային, տեղեկատուութիւնը կը փոխանցուի ՆԱԹՕ-ին:

Անդրադառնալով այն հարցին, թէ այդ համակարգի օգտագործումը որքանով կ'առնչուի դրացի երկիրներուն՝ Շահին յայտնած է, որ միայն երկու երկիրները հասանելիութիւն կրնան ստանալ միմեանց ռատարներու տեղեկութիւններուն, սակայն ընդօժան է:

«Ատրպեյճանի մէջ գտնուող ռատարային մէկ կայան աշխարհագրական տեղակայման պատճառով կրնայ յայտնաբերել Իրանի հիւսիսը գրտնուող օդային մարմինները կամ հրթիռային շարժումները: Թուրքիոյ մէջ գտնուող ՆԱԹՕ-ի Քիւրեքքի ռատարային կայանի հիմնական առաքելութիւնը Իրանի փալիստինի հրթիռային շարժումներուն հետեւիլն է: Այստեղ որոշ կոյր կետեր կան: Ատրպեյճանի մէջ գտնուող ռատարները կրնան վերացնել այդ կոյր կետերը: Այս իրավիճակը առաւելութիւն կը ձեւաւորէ ՆԱԹՕ-ի եւ Թուրքիոյ համար, իսկ Իրանի համար՝ անյարմարութիւն»:

### «ՄԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ...»

Սկիզբ՝ Էջ 9

Այս դպրոցները հայերէնաւանդ որակեալ ուսուցիչներու պէտք ունին անշուշտ, որպէսզի արդիւնաւետ կերպով ի կատար ածեն իրենց առաքելութիւնը: Իսկ հայերէնաւանդ ուսուցիչները ուրկէ՞ պիտի գան:

Յիշեցէ՛ք. մինչեւ 70-ական թուականներ, այսինքն՝ իր գոյութեան առաջին յիսուն տարիներուն, հայ սփիւռքը հայերէնաւանդ ուսուցիչի տագնապ էր ունեցած: Մեր հարիւրաւոր վարժարանները (Պոլիս, Յալէպ, Պէյրութ, Պաղատ, Կիպրոս, Գահիրէ, Թեհրան եւ այլուր) ունեին հին սերունդին պատկանող պատկառելի ուսուցիչներու փաղանգ մը, որ մինչեւ իր վերջին շունչը ծառայեց հայ դպրոցին ու մնաց պատնէշի վրայ:

Աւելի ուշ Երուսաղէմի ու Անթիլիասի դպրեվանքերը, Կիպրոսի Մելգոնեան կրթ. հաստատութիւնը, Երեւանի պետական համալսարանը (մասնաւանդ խորհրդային շրջանին), Նաեւ Յալէպի ու Պէյրութի երկրորդական վարժարանները ուսուցիչներ պատրաստելու, սփիւռքի մեր հարիւրաւոր դպրոցներուն համար հայագետներ հայթայթելու իսկական հնոցներ եղան երկար տարիներ: Այս դպրոցներէն շրջանաւարտները, փառքով ու պատուով, անմիջապէս ձեռք առին հին սերունդին պարգած դոօշն ու շարունակեցին քալել Նոյն ուղիով:

Մերնդափոխութիւնը իրականացաւ ուրեմն բնական կերպով, հեզասահօրէն: Բայց 90-ական կամ 2000-ական թուականներէն ետք բա՛ն մը խախտեցաւ մեր ազգային կեանքին մէջ: Չարմանալիօրէն, Յայաստանի վերանկախացումը, սկզբնական տարիներուն իր յառաջացուցած խանդավառ ալիքէն ետք, կարծէք ինքնալքումի ու ձեռնափութեան մղեց հայ Սփիւռքը: Հետզհետէ դպրոցներ սկսան փակուիլ հոս-հոն (սկսելով Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան հռչակաւոր վարժարանէն), գոյութեան կոչուած հայագիտական ամպիոններ ամլութեան մատնուեցան (ինչպէս՝ Պէյրութի պարագային), հայերէնի ուսուցումը սկսաւ կաղալ, չարդիւնաւորուիլ՝ անցեալին հետ բաղադատաբար:

Այսօր մեր դպրոցներուն մէջ կը պաշտօնավարեն սփիւռքի Գ. սերունդին, բայց ավելի լայն չափով՝ արդէն Դ. սերունդին պատկանող ուսուցիչներ: Իսկ այս վերջին սերնդափոխութիւնը իրականացած է մե՛ծ դժուարութեամբ, երկուներով: Հայերէնի որակեալ դասատուներ գտնելը մի՞ձաւանջ դարձած է ամենուրեք: Պաշտօնին թեկնածուները յաճախ չունին իրենց դասաւանդելու կարողութիւնը, կը դասաւանդեն կաղն ի կաղ: Ընդհանրապէս չունին Նաեւ իրենք զիրենք ինքնամշակումի ենթարկելու, կատարելագործուելու մղումն ու ցանկութիւնը, որ բանալին է իսկական յաջողութեան (կը ճանչնանք ուսուցչուհիներ, որոնք քսան ու ավելի տարիներ պաշտօնավարելով հանդերձ, տեղքայլի մէջ են, չեն գարգացուցած իրենք զիրենք): Իսկ դպրոցները, անճար ու անզօր, ստիպուած են կամայ-ակամայ գոհանալ եղածով:

Բայց Նախ, հայագիտական հիմնարկէն առաջ, պէտք է պարբերաբար ձեռնարկել հայերէնաւանդ ուսուցիչներու վերապատրաստութեան. ուսուցիչները մի՛շտ ալ կը կարօտին վերաթարմացումի, որովհետեւ դարաշրջանը մասնագիտութեան դարն է: Հարկ է ուղղել ու վերապատրաստել ուսուցիչները՝ ոչ միայն մանկավարժական նորանոր գիտելիքներով զինելով, այլ Նաեւ՝ դասաւանդութեան եղանակի ու ձեւի արդիաշունչ մեթոտներու ծանօթացնելով զանոնք: Դպրոցները, գոնէ 3-4 տարին անգամ մը, սերտուած ծրագրով մը պարտին ամառնային վերաորակաւորման լսարաններ սարքել հայ ուսուցիչներուն համար: Ասիկա օգտակար պիտի ըլլայ բոլորին՝ դպրոցին, ուսուցիչին ու աշակերտին հաւասարապէս:

Յաջող քայլը պիտի ըլլայ ուսուցչանոցը՝ երկու տարուան սեղմ ծրագրով: Այսպիսի հիմնարկ մը պիտի զինէ ու Նախապատրաստ ուսուցչական պաշտօնի թեկնածուները՝ ինքնավստահօրէն ստանձնելու իրենց վսեմ պաշտօնը: Մեր գաղութներէն ոմանք անցեալին, յաջողապէս կատարած են նման փորձեր եւ՝ մեծապէս օգտուած: Աչքի առջեւ ունենալով սփիւռքեան ամենօրեայ վարժարաններու տեղաբաշխումի մօտաւոր քարտեզը՝ հայկական ուսուցչանոցի մը անյապաղ կարիքը ունին ամենէն առաջ Փարիզը, Լոս Անճելըսը, Պուէնոս Այրեսն ու Պոլիսը: Այս քաղաքներուն անունները կու տամ, որովհետեւ այնտեղ գոյութիւն ունին ամենօրեայ վարժարաններու լայն ցանցեր: Մեր այս գաղութները, փա՛ռք Աստուծոյ, դեռ իրենց ծոցին մէջ ունին անհրաժեշտ տարրերն ու հարկաւոր նիւթակաւը՝ գլուխ հանելու համար նման կենսական ծրագիր մը: Անոնք պէտք չէ տնտնան: Պատկերացուցէք, որ Զալիֆօրնիոյ մէջ ունին 14 հայկական ամենօրեայ դպրոց, սակայն ուսուցիչներ պատրաստող հայագիտական հիմնարկ մը չկայ:

Ուսուցչանոցը կրնայ փոխարինուիլ անշուշտ հայագիտական հիմնարկներով ալ, ավելի ընդգրկուն ծրագրով մը: Օրինակ կրնայ ծառայել Յալէպի Համագայինի Հայագիտական հիմնարկը, որ չորս տարուան հայագիտական ամբողջական ծրագիր մը կը կ'իրարկէ շուրջ 25 տարիէ ի վեր՝ մարդու հայթայթելով թէ՛ գաղութին, թէ՛ արտասահմանին (ի դէպ, պատերազմի բերումով շատ դժուար պայմաններու մէջ գոյատեւեց ան ու ինքզինք մատակարարեց փոքր պիւտեճով մը): Չենք կրնար մոռնալ Լիբանանն ալ, որ պատուաբեր փորձ ունեցած է այս մարզին մէջ՝ իր մէկէ ավելի հաստատութիւններով (Նախկին Հայկազեան քոլէճ, ՀԲԸՄ-ի Հիւսիսեան եւ Համագայինի հիմնարկներ, որոնք փակուած են դժբախտաբար): Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը շուրջ տասը տարիէ կը ջանայ վերաբարձել այդ մարած ջահը՝ մայրավանքին մէջ հաստատուած Հայագիտական դասընթացներով: Երկու-երեք տարի առաջ, Նոյն գծով, համեստ Նախափորձի մը ձեռնարկուեցաւ Նաեւ Մոնրեալի մէջ, Համագայինի Նախաձեռնութեամբ: Այս ձեռնարկները պէտք է ամրապնդուին, տեսականաւորէն:

Մեր այսօրուան պայմաններուն մէջ անկարելի է անկալել, որ հայերէնաւանդ ուսուցիչ մը ԻՆՔՆՈՒՄ ըլլայ, մշակած ու կոփած ըլլայ ինքզինք սոսկ ինքնաշխատութեամբ, յարատեւ ինքնագարգացումով: Երանի՛ր այդպէս ըլլար: Երանի՛ր մեր շուրջ տեսնելիք մանկամարդ տղաք ու աղջիկներ, որոնք 15 տարեկանէն սկսեալ արտակարգ ու հիասքանչ սեր մը կը սնուցանեն հայերէնի նկատմամբ, շարունակ գրականութիւն կը կարդան, գրական ճաշակ մը կը գարգացնեն իրենց ներսիդին, հայ մամուլ կը կարդան ամէն օր, գրելու փորձեր կ'ընեն, երբեմն մեր մշակութային կեանքին մասնակցութիւն կը բերեն կարճ բանախօսութիւններով, ինքնաբոլբոլ մերձեցումով կը սերտեն մեր լեզուին հիմնական քերականութիւնը, կ'աշխատին կատարելագործել իրենց բառամթերքը, ուշադիր են ուղղագրական ու կետադրական օրէնքներու եւ այլն:

Բայց ու՛ր են այսպիսի համբուրելի տիպարներ:

(Շար. 1)

«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Մաթիկ (Մատթոս) Էպիփոպոսի

**«ԱՆԿՐԿՆԵԼԻ ՀԱԼԷՊԸ»**

գիրքը, հրատարակութեամբ «Կիլիկիա» հրատարակչատան: Յալէպ, 2023:

## Պրիմալե

### ՍԻՐԵԼՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ




Մարուշ Երամյան

Հարկա՛ւ սիրելու տեսակներ կան, որքան մարդ, այնքան տեսակ, իւրաքանչիւր ոք ազատ է իր ուզած ձեւով, ոճով, հասկացողութեամբ սիրելու սիրոյ առարկան:

Վերջերս սիրելու այս հարցը յաճախ շրջանառութեան կը դրուի, երբ նիւթը կը դառնայ Հայաստանի, մանաւանդ Արցախի շուրջ: Թեր ու դեմ կարծիքներ, իրարու շոյալուած խորհուրդներ ... Եւ այս բոլորը՝ ընկերային ցանցերուն, մանաւանդ դիմատետրի էջերուն մէջ:

Բնական է, որ չենք կրնար անտես ամեն ինչի մատուցողի էջերուն վրայ արծարծուող համեմատաբար լուրջ նիւթերը, որովհետեւ անոնք իրենց արծազանգներով ազդեցութիւն կ'ունենան շատերու վրայ:

Եւ այսպէս հայրենիքը սիրելու, գայն ինչպէ՛ս սիրելու եւ ընդհանրապէս սիրողներու եւ սիրողներու բանակ մը ամեն օր կը տողանցէ դիմատետրի էջերուն վրայ:



Վաղուց, երբ Սովետական Միութեան, հետեւաբար նաեւ Հայաստանի դռները բացուեցան գրասաշրջիկներու համար, եւ սփիւռքահայեր, կարօտով մտրակուած սկսան յաճախ Հայաստան երթալ, տեսնել ամենօրեայ կեանքէն անդին՝ Երեւանի գեղեցկութիւնը, հպարտառիթ կառոյցները՝ օփերային շէնքը, Մատենադարանը, Ազգային ցուցասրահը, թանգարանները եւ այլն, եւ սկսան ներքողներ ընել, անմիջապէս իրենց ըսուեցաւ նոյն խօսքը, բազմաթիւ տարբերակներով:

– Եթէ այդքան կը սիրէք կոր, եկէ՛ք քիչ մըն ալ դուք պահեցէ՛ք հայրենիքը...

Ինչպէս որ մենք ծանօթ չէինք կրնար ըլլալ Հայաստանի մէջ ապրողներու առօրեային, նոյնպէս իրենք ծանօթ չէին կրնար ըլլալ սփիւռքահայուն առօրեային. փոխադարձ անհասկացողութիւն մը, որ ահա քանի տասնամեակ ետք ինքզինք կը գագնէ տակաւին: Երկու կողմերն ալ ճիգ չըրին գիրար հասկնալու, կամ չէին գիտէր ինչպէ՛ս ընել այդ ճիգը:

Այսօր, Հայաստանի ներկայ պետութեան կեցուածքը կ'ընդվզեցնէ սփիւռքահայերուն մեծամասնութիւնը, անկախ անոնց կուսակցական պատկանելիութենէն. նոյնիսկ անոնք, որոնք ոչ մէկ կուսակցութեան կը պատկանին, նոյնիսկ անոնք, որոնք համակիր իսկ չեն որեւէ կուսակցութեան, խորունկ ցաւ կ'ապրին 2020 թուականէն ի վեր, տեսնելով սերունդի մը փճանալը, հողերուն կորուստը ... Եւ տակաւին յստակ չէ թէ ո՛ր պիտի հասնի այս վայրէջքը:

«Յաւով պէտք է փաստել, որ ոչ դուք, ոչ մեկնաբանողները Հայաստանի իրական մարտահրաւերներին, մթնոլորտին ու տրամադրութիւններին ծանօթ էք: Ձեր պատկերացումները Հայաստանի վիճակի մասին միակողմանի են ու ոչ ամբողջական:

Տեսէ՛ք, Հայաստանի կառավարութիւնը ոչ մի տարածք չի յանձնել, մենք ՊԱՐՏՈՒԵԼ ենք պատերազմում, որի արդիւնքում այդ տարածքները յայտնուել են թշնամու մօտ եւ եղել են վերելում ձեր նշած միւս արհաւիրքները՝ գողեր, գերիներ: Հողերը յանձնելու ձեր մեղադրանքը ճիշդ կը լինէր, եթէ մեր բանակը յաղթանակած Քուռն անցած, դէպի Պաքու շարժուէր, Փաշինեանն էլ դաւաճանաբար բռնէր հողերը յանձնել: Փաշինեանին կարելի է մեղադրել, որ նախապէս չի յանձնել այդ տարածքները՝ խուսափելով պատերազմից, ինչպէս որ առաջարկում էր առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն ու ինչպէս պահանջում էին տարիներ շարունակ միջազգային հանրութեան ներկայացուցիչները: Դիւանագիտական լուծումը դա էր, որը ես վստահ եմ, որ ձեր սրտով լուծում չէր լինելու կրկին:

Կարող էր դիւանագիտորէն մանուրէր, մի քանի տարի էլ յետաձգէր պատերազմը՝ չգիտեմ, հնարաւոր է, որ այստեղ փորձը չի հերիքել, բայց

հնարաւոր է, որ պատերազմ սկսելու Ալիեւի ցանկութիւնը առաւելապէս կապուած էր այս պահին աշխարհում տիրող անելի մեծ աշխարհաքաղաքական իրողութիւններից, քան Փաշինեանից: Եւ երբ դիւանագիտութեան մասին ենք խօսում, պէտք չի մոռանալ, որ դիւանագիտութիւնը երկրի իրական վիճակից կտրուած հասկացութիւնն է: Եթէ քո երկիրը չունի ուժեղ բանակ, չունի ժամանակակից զէնք, տնտեսապէս ու բնակչութեամբ տասնեակ անգամներ թոյլ է, քան հարեւանները, դուք աշխարհի լաւագոյն դիւանագետը որ լինէք, չէք կարողանալու յաջողել, որովհետեւ խախտուած է ռազմական ու տնտեսական պայմանը:

Ձեր բերած փաստարկներն էմոցիոնալ գեղումներ են, որեւէ մէկի տակ դուք ռեալ փաստ ու վերլուծութիւն չէք նշում: Դուք ոչ մի իրական փաստ չունէք ներկայ իշխանութեան՝ դրսում դրեականներ գնելու մասին, ոչ մի ապացոյց: Գտէ՛ք ապացուցուած որեւէ փաստ, տեղադրէ՛ք այստեղ եւ ես ներդրութիւն կը խնդրեմ ձեզ կից: Փոխարէն, այո՛, նախկին իշխանութեան ներկայացուցիչները ունեն դրեականներ արտերկրում, օրինակ Գագիկ Խաչատրեանի միլիոնաւոր տոյարներով տունը ամերիկեան կառավարութիւնը առաջարկում է առգրաւել:

Ինչո՞ւմ եմ, մի կողմ թողէք այդ փրփակականտան, իրական փաստներն ուսումնասիրէ՛ք մի փոքր պատկերացնելու համար, թէ Հայաստանն ու Արցախը ինչ մարտահրաւերների առաջ են կանգնած: Եւ մեր Սփիւռքը, որ պիտի թիկունք կանգնի մեզ, նման տեքստեր է գրում ու հարուածում Հայաստանի պետականութեան թոյլ ու խարխուլ հիմքերին»:

Մեկը նոյնիսկ գրեր էր՝ «Սփիւռքահայերը ըստ իշխողներուն Հայաստանը կը սիրեն, կամ չեն սիրեր»:

Այդքա՛ն անմիտ է սփիւռքահայը, որ հայրենիքի սերը կապէ իշխող անձին հետ. ինք եւս չի՞ գիտեր, որ հայրենիքը անսասան է, մինչ իշխանաւորները կու գան ու կ'երթան: Եւ ի վերջոյ եթէ սփիւռքահայը կը խօսի իշխանաւորի մը թերութիւններուն կամ սխալներուն մասին, ատիկա կը նշանակէ՞, թէ չի սիրեր իր հայրենիքը ...

Այստեղ է ահա որ կը տարբերին հայրենիքը սիրելու եւ այդ սերը արտայայտելու կերպերը:

Սփիւռքահայը իր ամբողջ կարելին ըրաւ եւ կը շարունակէ ընել. տուաւ անհաշիւ, երբ նիւթն էր կարելորդ տուեալ պահուն. տուաւ իր գաւազներէն, երբ Արցախը կանչեց. տուաւ իր արուեստագետներէն, գիտնականներէն, մտաւորականներէն. իսկ վերջին քանի մը տարիներուն միլիոններ տուաւ, որոնցմով կարելի էր բանակը գինել:

Այս բոլորին մասին մտածելն ու գրելը, այս բոլոր նիւթերը բարեկամներով արծարծելը սրտի ցաւ է սփիւռքահայուն համար. ինչո՞ւ անելի վիրաւորել զինք, անելի խորացնել անհասկացողութիւնը. ի վերջոյ հողին վրայ ապրողները այլ ոյժ ունին, բայց այդ ոյժը փոխանակ հողէն հեռու ապրող իր հայրենակիցին վրայ գործադրելու, պէտք չէ՞ ուղղել թշնամիին:

Երբ կը գրեմ՝ «Ձեմ գիտեր ո՞ր երկրին վիճակը անելի ահաւոր է՝ Լիբանանի՞ն, որ պետութիւն եւ նախագահ չունի, թէ՞ մեր, ուր պետութիւնը երկրին դէմ կ'աշխատի ...», կը նշանակէ՞ թէ չեմ սիրեր հայրենիքս, թէ կը նշանակէ, որ այդ սերը սկստէր է տառապեցնել զիս, – Ե՞րբ դադարէր էր որ... – կը նշանակէ թէ ամեն օր եւ ամեն պահ սիրտս ափիս է, որովհետեւ կը վախնամ, շատ կը վախնամ գալիքէն, մինչ շատ-շատեր երգերով կը փորձեն ոյժ ներշնչել. երգերով. ինչպէ՛ս. երբ թշնամին ամեն րոպէ անելի եւ անելի կը գիտուի ...

### «ԳԱՆՁԱՍԱՐ»

#### ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Գիլվերջեան-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Վեհան Պարսումեան  
Ձեւաորոգ՝ Յովսէփ Զալոյեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիլվերջեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

## «ՔՐԻՍՄԱԸՍԵԱՆ» ՆՈՒԷՐՍ

Չեղոզ Պետիկեան

Ամերիկեան ծննդեան նախա-տոնակ՝ «քրիսմուս-իվ»-ն էր: Ուշ երեկոյեան այր եւ կին, երբ թոռնիկ Վանային «պէյպի սիթ» էինք եղած, յանկարծ տան դուռը գարնուեցաւ: Աւելի քան ութսուն անց, թաղի դրացիներէն թէ՛ իր հասակով եւ թէ՛ իր մարմնով հուժկու իրանտացի ճիւղին էր, որ մեզմէ քանի դուռ վար կ'ապրէր:

Այս մէկը աննախընթաց անակնկալ մըն էր, մեծ եւ հաճելի: Ներս հրաւիրեցի: Մերժեց: Ձեռքը դեղին մեծ պահարան-ծրար մը բռնած էր: Չայն անհանդարտ, գրեթէ ամչնալով, երկարեց.

– Տիս իս ֆոր եու, նեյպըր, – ըսաւ արագ մը, եւ պահարանը ինծի յանձ-

նէրէն մէկն էր:

Մեր թաղը փոխադրուելէն ի վեր, ամէն առաւօտ կամ երեկոյ մարզանքի մը պարտադրանքին տակ, երբ քալելու ելլէր, մեր դրան առջեւէն անցած պահուն, անպայման լայն ժպիտով բարձրածայն բարեւ մը կը նետէր: Այս ձեւով երկուստեք որոշ մտերմութիւն մը ստեղծուած էր, որուն իբրեւ հետեւանք գանազան առիթներով, իր կեանքի պատմութիւնը մեզի պատմած էր:

Ժամանակին ուստիկան եղած էր: Երեք մանչ գաւակ ունեցած էր, որոնք հեռաւոր նահանգներ կ'ապրէին: Հինգ տարի առաջ կինը՝ Մըրիս, մահացած էր ու գինք ձգած տեսակ մը անորոշ վիճակի մէջ:



նելով եւ «մերի քրիսմուս» մըն ալ անելցնելով, իր միշտ ժպտուն, կարմիր ու ամէկուտ դեմքով յարգանքով մըն ալ տիկնոջն քարտէլէ ետք, փորձեց խոյս տալ:

Կինս, իր մեկնումին առաջըր առնելու համար, իրարու ետեւէն համոզիչ նախադասութիւններ շարեց: Մարդը պահ մը միայն կենալով, շտապ բացատրեց, թէ որովհետեւ ես տարին քանի մը անգամ իրեն օգտակար դարձած էի, – գինք բժիշկի կամ մարքէթտարած, – հիմա պըզտիկ նուերով մը իր երախտագիտութիւնը կը յայտնէր: Կինս կրկին փորձեց գինք ներս հրաւիրել:

Կիները սասանկ են, մէկու մը «պրչըր եթէ բռնեն, չեն ձգեր»: Այրերէն անելի ճկուն են եւ մանաւանդ որոշ թէքնիկներուն կը գործածեն իրենց ծրագիրները յաջողութեամբ պսակելու համար: Ու կը կարծեն, որ միշտ կը յաջողին: Իմ բախտէս՝ այս անգամ իր ջանքերը ապարդիւն ելան: Կինս, սակայն չյաջողեցաւ, որովհետեւ մեր բարի ճիւղին անդրդուելի մնացած էր: Ապա կարճ ու կտրուկ բարի մաղթանքները ցրուելէ ետք, հեռացաւ: Ահա ամերիկեան դրացնութիւն:

Ահա ամերիկացի դրացիս եւ բարիներէն մէկը: Հոս այս երկրին մէջ բարի դրացին այն է, որ քեզի գէշութիւն չ'ընէր եւ կամ քու գործերուդ միջամուխ չ'ըլլար:

Ճիւղին, ինծի համար բացառիկ-

Կնոջ ողջութեան՝ ամէն «թանքսկիվիսկ»-ին գաւակները իրենց ընտանիքներով, իր մօտ կը հաւաքուէին: Իսկ խեղճ Մըրիսի մահէն ետք, ամէն բան շրջուած ու փոխուած էր: Ո՛չ «թանքսկիվիսկ» մնացած եւ ոչ ալ «քրիսմուս»: Փոխուած էր նաեւ մեր ճիւղին ու հազիւ տարի մը ամուրի մնացած իր յաճախած «չըրչէն» «կըրլ ֆրենտ» մը գտած էր:

Այս ձեւով իր գաւակներուն բացակայութեան, նոր եկուորին հետ կ'անցներ իր տօնական օրերը: Այսչափ միայն գիտեց: Այսքան տեղեկութիւն տոյնիսկ շատ է ամերիկեան դրացնութեան օղակէն ներս:

\*\*\*

Ներս մտանք, մեր տունը: Երեքով եւ յատկապէս Վանային անհանդարտ եւ ուրախ հետաքրքրութենէն ծնած աղմուկով, բացինք «անվըօբը»:

Տիեզերքի փայլուն ու պսպղուն աստղերու մեծադիր նկարներ, առաւել քանի մը էջ գրութիւն եւ հաստատագիր մը: Այս էր ծրարին ամբողջ պարունակութիւնը: Այս էր նաեւ նուերս:

Կարծեմ, ինձմէ անելի, թոռնիկս յուսախաբ եղաւ: Հագիւ մէկ ու կէս տարեկան այդ աղջնակը ո՞վ գիտէ ինչէ՛ր ակնկալած էր այդ տափակ ու մեծ պահարանէն:

Կինս բարձրածայն կարդաց: Ընթերցում, տօնական օրերուն առթիւ,

ինծի «աստղ» մը կը նուիրէր: Մարդը իր տալիք նուերը այնքան հապճեպով պատրաստած ըլլալու էր, որ նուերին գնման գինը պահարանին մէջ մոռցած էր, – Յիսուն չորս տոլար եւ ութսուն սենթ: Այսչափ էր արժեքը: Հոգ չէ, նոյնիսկ շատ ալ է:

Իրմէ փոխադարձ ակնկալութիւն մը երբեք չէի ունեցած:

Նայեցայ անշքապետի մեծադիր գունաւոր քարտէզին: Աստղին վրայ անունս գրուած էր: Անոր տեղը յըստակ էր: Հեռաւորութիւն, լայնք եւ տարածութիւն՝ շատ պարզ:

Ուրեմն այս վայրկեանէն սկսած, շնորհիւ դրացի ճիւղին՝ իմ անունովս աստղ մը գրանցուած էր երկինքին վրայ: Եկուր եւ հաւատա՛:

Բայց՝ Փաստ ունիմ: Ունիմ նաեւ հաստատուած վկայագիր մը:

Իսկապէս թէ մեր երկիրը ըլլալիս, ընկերներս, ազգականներս կամ բարեկամներս ու նոյնիսկ տնեցիները վրաս պիտի խնդային եւ շատ հաւանաբար գիս խնձածներուն շարքին դասէին:

\*\*\*

«Վա՛յ ճիւղի, վա՛յ», – կ'ըսէի մտովի, եթէ նոյնիսկ հազար տարի ալ այս երկիրը ապրած ըլլայի, բնաւ մտքիս ծայրէն պիտի չկարենայի անցնել, առ ի երախտագիտութիւն նման նուեր մը տալ ուրիշին:

Հիմա սակայն իրականութիւն էր, որ թէեւ աստղ մը չ'եմ դարձած սակայն իմ անունովս աստղ մը ունիմ, կայ երկինքին վրայ, Աստուծոյ մօտ, լուսնին քով կամ արեւին կից: Ալ դուք հաշուեցե՛ք եւ որոշեցե՛ք:

Կը գգայի, որ հիմա անձեւ մեկնած, նոր անձս մը կը փնտռէ: Նոր խանդ մը վարակած էր երազներս:

Պետրոս Դուրեան իր մահուան նախօրեակին ուզած էր աստղ մը դառնալ «յաւելուլ երկինք...»: – Եւ տակաւին Թեքեանի «երկինք անթիւ աստղերէն մէկն...» այս միտքս էր: Իմ պարագայիս, շնորհիւ դրացի ճիւղին, ես արդէն հատ մը ունիմ:

Վայրկեանի մը համար քարտէզը ձեռքս դուրս ելայ: Հորս կողմս նայեցայ: Պարտէզի մթութեան մէջ աչքերս երկինք յառած փնտռեցի անգտանելի այդ աստղս:

Անկասկած, որ ամերիկեան ախտէն վարակուած էի:

Հեքըվ փնտռեցի երկինքի նոր տուն-աստղս, ու միամտօրէն մտքս անցուցի, թէ ո՞վ գիտէ օր մը թոռնեքուս թոռները, գիտութեան ընձեռած գիւտերուն շնորհիւ եթէ առիթը ունենային այցելելու իրենց հայ մեծ-մեծ-մեծ հօր կամ մեծ-մեծ-մեծ պապիկին անունով արձանագրուած մոլորակը անդեականին մէջ, ես գիս իսկապէս երջանիկ պիտի գգայի:

Յանկարծ քիթիս տակէն սկսայ խնդալ: Ես իմ վրաս կը խնդայի: Կը հաւատայի, որ ներկայէն փախուստ տալով ինկած էի ճիւղին բերած նոր երազներուն գիրկը, ուր մանկական հաւատքով վայրկեաններս անիմաստ երանութեան մէջ սահած էին ակամայ:

Վերը, աստղերու բազմութեան մէջ յիսուն տոլարոնց աստղ մը, արդէն իսկ գիս ժամանակաւոր երանութեան մը գիրկը նետած էր: Ես իմ խնդրուքս չէի կրնար գապել:

### ՍՐԲԱՆ ՆԱՅՐԸ... Սկիզբ՝ 1 Է

Ահմատ Մանսուր, Սուրիոյ գրաստեղծութեան գրասենեակներու համախմբումի նախագահ երկրչփ. Թալալ Խտէյր, Հայկաի ճարտարարուեստի պալատի նախագահ երկրչփ. Ֆարես Շահապի եւ Գործադիր իշխանութեան վարչական գրասենեակի պատասխանատու Մուհամմետ Ֆայատ:

Սրբագան Հօր կ'ընկերակցէին Ազգային Վարչութեան անդամներ երկրչփ. Մարալ Գալայճեան-Սեմերճեան եւ Արմէն Գասպարեան, կրօնական ժողովի ատենապետ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Առաքել Արդ. Գատեհճեան: Ներկայ էին նաեւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետ Սիրան Աւընեան-Ամպարճեան եւ Շրջ. Վարչութեան անդամ Մայտա Շէյթանեան-Աւագեան:

Յուցահանդէսին նպատակն էր սուրիացի տիկիններուն առիթ ընձայել՝ ցուցադրելու եւ վաճառելու իրենց արտադրութիւնները, որպէսզի երկրի տնտեսական ծանր պայմաններուն մէջ կարենան աշխատանք ծաւալել:

Յուցահանդէսին իրենց մասնակցութիւնը կը բերէին 93 տաղաարներ, որոնց կարգին ՍՕ Խաչի

Ձեռարուեստի, Աշխատանցի, Փեթակ եւ Շիրակ պաշարի տան յանձնախումբերը, ինչպէս նաեւ մեծ թիւով հալեպահայ գործարար տիկիններ, որոնք ցուցադրած էին ստեղծագործ աշխատանքով եւ մատչելի սակերով բազմատեսակ արտադրութիւններ:

Սրբագան հայրը այցելեց բոլոր տաղաարները եւ իր հայրական յորդորներով քաջալերեց մասնակիցները, գնահատելով անոնց աշխատասիրութիւնն ու նրբաճաշակ արուեստը:

Յիշենք, որ Հայկաի ճարտարարուեստի գրասենեակի Գործարար Տիկիններու Յանձնախումբին մաս կը կազմեն երկու հայուհիներ՝ յանձնախումբի ատենապետ երկրչփ. Անի Մարկոսեան-Աւսլանեան եւ Սոնա Գաբրիէլեան:

Աւարտին, սրբագան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը հանդիպում ունեցան Հայկաի ճարտարարուեստի Գրասենեակի Գործարար Տիկիններու Յանձնախումբին հետ: Մակար սրբագան գնահատեց յանձնախումբին աշխատանքը եւ պատուիրեց, որ յաճախակիօրէն այսպիսի նախաձեռնութիւններ կազմակերպեն՝ քաջալերելու համար ստեղծագործ տիկինները:

Յուցահանդէս-վաճառքը շարունակուեցաւ մինչեւ Կիրակի 25 Յունիս 2023:



## «ՄԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՕԺՏԵՆՔ ԶԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՅԻՄՆԱՐԿՆԵՐՈՎ»

«Ազդակ»-ի Մտերմիկ Չրոյցը Հայկապահայ  
Մտաւորական Լեւոն Շառոյեանի Հետ

Չրոյցը վարեց  
Քրիստ Կրոյեան

Մայիսի վերջին տասնօրեակին Լիբանան կը գտնուէր հայկապահայ ծախսօ մտաւորական, բանասէր եւ կրթական մշակ Լեւոն Շառոյեան: Ան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կրթական-հայագիտական գրասենեակին հրաւերով ժամանած էր Պէյրութ՝ մայրավանքին հովանին վայելող Հայագիտական դասընթացներուն բերելու իր նպաստը՝ դասաւանդելով արեւմտահայերէնի խորացնելու քերականութիւն եւ սփիւռքահայ գրականութիւն:

Շառոյեան իր այցելութեան օրերուն առիթ ունեցաւ կապեր հաստատելու լիբանանահայ մտաւորական տարբեր շրջանակներու հետ եւ որպէս բանախօս՝ ելոյթ ունեցաւ Համազգայինի «Գիր եւ գրականութիւն» մասնագիտացած յանձնախումբին կազմակերպած գրական այն երեկոյթին, որ ձօնուած էր նահատակ բանաստեղծ Սիւսանայի ծննդեան 145-ամեակին:

Շառոյեան անուանի դէմք մըն է հայ մամուլի էջերուն մէջ՝ ահա արդէն աւելի քան երեսուն տարիէ ի վեր: Հեղինակ է գրականագիտական շարք մը հատորներու եւ քերականական-ուղղագրական մատչելի ուղեցոյցի մը, որ լոյսին բերուած էր անցեալ տարի: Երկու տասնամեակէ ի վեր ան դասախօս է Համազգայինի Հայկապահայ հիմնարկէն ներս, չորս տարիէ ասդին ալ կը գործակցի կաթողիկոսարանի կրթական գրասենեակին՝ Հայագիտական դասընթացներու գծով, իբրեւ այցելու դասախօս:

«Ազդակ» հարցազրոյց մը ունեցաւ Լեւոն Շառոյեանի հետ՝ անոր փորձառութեան ընդմէջէն լուսարձակի տակ առնելու համար հայոց լեզուի եւ հայագիտական ամպիոններու տեղն ու դերը՝ սփիւռքահայ ժամանակակից գաղութներուն մէջ:

«ԱԶԴԱԿ».- Վերջին տարիներուն յաճախակի այցելութիւններով գըտնուեցաք Լիբանան, կապեր հաստատեցիք հայ ուսանողութեան հետ: Արդ, քաջատեղեակ ըլլալով թէ՛ Սուրիոյ եւ թէ՛ Լիբանանի մեր գաղութներուն ազգային առօրեային, այսօր ի՞նչ պիտի ուզէիք ըսել հայոց լեզուին պարզած իրավիճակին մասին՝ տուններէն ներս, փողոցին մէջ, մամուլ էջերուն վրայ ու մանաւանդ մեր դպրոցներուն կամ կրթական հաստատութիւններուն յարկին տակ:

ԼԵՒՈՆ ՇԱՐՈՅԵԱՆ.- Լիբանանն ու Սուրիան դրացի երկու գաղութներ են՝ գրեթէ կատարելապէս հայախօս ու հայագիր: Այս երեւոյթը գտնուելու յստակօրէն կը գատորոշէ սփիւռքեան միւս գօտիներէն, մասնաւորաբար՝ Արեւմուտքէն, ուր գիտեցք, որ հայախօսութիւնը լա՛յն չափով իր տեղը գիշած է օտարախօսութեան:

Եթէ Լիբանանն ու Սուրիան տակաւին հայախօս կը սեպուին, այս ալ իր կարգին կը նշանակէ, որ մեր այս երկու սիրելի գաղութները կը հանդիսանան արեւմտահայերէնի պահպանման ու գոյատեւման գլխաւոր երկու ամրոցները: Պիտի համարձակիմ ըսել՝ վերջին բերդերը, որոնք տակաւին չեն ինկած, որովհետեւ նոյնիսկ Պոլսոյ կամ Յունաստանի նման մերձարեւելեան հայագաղութներու մէջ հայախօսութիւնը հետզհետէ կը ջքանայ, մինչ օտարախօսութիւնը սրընթաց կ'արշաւէ:

Սակայն Պէյրութն ու Հայկապահայ ալ վիրաւոր են այլեւս: Ներքին պատերազմները, քաղաքական անկայունութիւնն ու տնտեսական ահաւոր փլուզումը տկարացուցին գտնուելու: Թէ ի՞նչ այլաբնոյթ տազնապներէ անցաւ, ու դեռ կ'անցնի, մայրիներու ջքնաղ երկիրը յիսուն տարիէ ի վեր, ծանօթ է բոլորիս: Անդին՝ «երազային» Հայկապահայ ալ այլեւս այն չէ՛ ինչ որ էր անցեալին: 12 տարի առաջ ծայր տուած պատերազմին պատճառով հայկապահայ գաղութը կրեց մեծ վնասներ: Նօսրացանք թիւով ու մարդոժով, սահմանափակուեցան մեր նիւթական կարելիութիւնները, կծկուեցանք ու մնացինք բուռ մը: Գաղթի ալիքները ցրուեցին մեզ: Այն, ինչ որ ունէինք կամ պատրաստէր էինք որպէս մարդոժ՝ երիտասարդ աշխատունակ տղաք, հնարամիտ ու փայլուն արհեստաւորներ, տիպար ընտանիքներ, գրասէր տարրեր, հայերէնաւանդ ուսուցիչներ, մամուլի ու գիրի սպասաւորներ, հեռացան երկրէն մեծաւ մասամբ:

Հիմա կը ջանանք պահել մեր ձեռքը մնացածը: Եւ ամէնէն առաջ՝ դպրոցները, առանց որոնց՝ անկարելի է պատկերացնել մեր համայնքային կեանքը:

Ամէն բանէ առաջ հաստատեցք, որ Հայկապահայ կամ Պէյրութի փողոցներուն մէջ, արհեստանոցներէն կամ վաճառատուներէն ներս հայ տարրը առհասարակ, հայախօս է, երբ կը շփուի իր նմանին հետ: Եթէ հայախօս է դուրսը՝ գործի աշխարհին մէջ, ուրեմն ենթադրելի է, որ հայախօս է տան մէջ եւս: Լեզուի կենսունակութեան առաջնահերթ պայմանն է ապիկա:

Բայց սոսկական հայախօսութիւնը առանձին բաւարար չէ հայապահպանման լայն պատահին վրայ: Անհրաժեշտ է նաեւ հայերէնով ընթերցում (գիրք ու մամուլ) եւ գրաւոր հայերէնի օգտագործում (նամակագրութիւն, յօդուածագրութիւն, համացանցի ընկերային հարթակներու վրայ հաստատ գրառումներ):

Կը նկատեմ, որ Լիբանանի մէջ մեծ ջանք կայ գրահրատարակչական գործունեութեան: Լոյսին կը բերուին մանուկներու կամ պատանիներու յարմար շատ գեղատիպ ու հմայիչ հրատարակութիւններ: Այս հիմնալի աշխատանքները տարիներէ ի վեր կը շարունակուին առանց դադարի, ինչ որ չափազանց գնահատելի է: Նոր սերունդին հայախօսութեան ու հայերէնագիտութեան համար պէտք չէ խուսափիլ նիւթաբարոյական ներդրումներ:

Դպրոցներու պարագան կը կարօտի շատ աւելի մեծ ուշադրութեան ու խորունկ ընկալութեան: Տեսէ՛ք, Լիբանանի տարածքին կը գործեն 16 հայկական դպրոցներ, Հայկապահայ մէջ՝ 8 (վարժարաններ ունինք Դամասկոս, Քեսապ, Լաթաքիա եւ Ճեզիրէ ալ): Սուրիահայ վարժարաններու դիմագրուած մեծագոյն մարտահրաւերը հայախօսութեան հարցն է հիմա: Քանի որ մեր փառաւոր դպրոցները կորսնցուցին իրենց աշակերտութեան 60-70 առ հարիւրը, ուստի ստիպուեցան կամայ-ակամայ գիրկ բանալ ոչ հայ աշակերտներու առջեւ: Այս ալ կարգուսարքի, աստիճանաբար ու հայաշունչ մըթնոլորտի անսախաղէպ վերիվայրումներ ստեղծեց այնտեղ: Հիմա, դասարանին մէջ կամ զբօսանքին, բնական երեւոյթ սկսած է դառնալ տեղական



Studio Alex

լեզուով խօսակցութիւնը ընդմէջ աշակերտներուն: Տասը տարի առաջ այդպէ՛ս էր: Ո՛չ, բացարձակապէ՛ս ոչ: Սուրիահայ վարժարաններու ընդհանուր համարանքին մէջ հազիւ 2-3 դպրոց կրցած է ցարդ կուրծք տալ այս հոսանքին ու իր երդիքը պահել անաղարտ:

Այս մտահոգիչ երեւոյթը, բնականաբար, նորանոր պատուէշներ եւ խութեր կը բարձրացնէ դպրոցներու հայապահպանումի վստահութեան առջեւ: Դուք կը կարծէ՞ք, թէ կարելի է որակեալ հայերէն սորվեցնել խառն աշակերտութիւնի հիւրընկալող վարժարաններուն մէջ: «Անկարելի առաքելութիւն» մըն է առիկա:

Լիբանանի մեր վարժարաններն ալ գերծ չեն դժուարութիւններէ: Հոս տասնամեակներէ ի վեր կայ դեպի օտար վարժարաններ անկասելի հոսք մը: Ասիկա ոմանք կը վերագրեն *սնուպիզ մի*, ուրիշներ՝ տնտեսական դժուարութեանց: Լիբանանահայ դպրոցները ունին թիւի լուրջ տագնապ ալ. 60, 100 կամ 120 աշակերտով (որոնց մէկ մասը՝ ճիւղավարժ) դպրոց մը ինչպէ՛ս պիտի հոգայ իր մագլցող ծախսերը: Սուր բնոյթ ունի նաեւ հայերէնաւանդ հմուտ ուսուցիչի կամ հայագիտական դասաւանդութեան մասնագէտ տարրի պակասը, որ ընդհանրական տագնապ է սփիւռքեան մեր բոլոր գաղութներուն պարագային, առանց բացառութեան:

Լիբանանի առաջաբար, ինծի շատ մեծ ցաւ կը պատճառէ լիբանանահայ մամուլին պարզած ահաւոր ընկրկումն ու անարդարանալի տեղատուութիւնը, որ ուղղակի ողբերգական է: Դեռ 5-6 տարի առաջ, երբ Պէյրութ կ'այցելէի, առաւօտուն իմ սեղանին վրայ կրնայի տեսնել երեք հայերէն օրաթերթեր՝ մեր քաղաքական կուսակցութեանց օրկանները: Այսօր այդ երեքէն մէկն է միայն՝ «Ազդակ»-ը, որ իր ամէնօրեայ առաքելութիւնը կը կատարէ ճշգրտապահօրէն ու աննահանջ, մինչ միւս երկուքը՝ 85-ամեայ «Չարթօն»-ն ու «Արարատ»-ը (նոյնքան սիրելի հրատարակութիւններ ինծի համար) կը տուայտին գոյութեան ու անեացումի սահմանագիծին վրայ: Կան ու չկան (իմ խօսքը կը վերաբերի անշուշտ թերթերու տպագիր օրինակին): Տխու՛ր երեւոյթ, որ մէկ կողմէ սերտօրէն կ'առնչուի՝ լիբանանահայ գաղութին առանցքը կազմող մայր կառոյցներու ներքին տկարացումին ու թելաբեկումին, միւս կողմէ ալ՝ բնական հետեւանքն է հայ մտաւորական տարրին համարեա՛ն նօսրացումին: Դեռ չենք խօսիր շարք մը թերթերու եւ պարբերականներու խեղճ բովանդակութեան ու լեզուական քառսին մասին, որ սիրտ կը ծակէ ու կը խաթարէ մեր ճաշակը:

«Ա.».- Կրթական մշակ մը ըլլալով՝ ինչպէ՛ս կ'արժեւորէք հայերէնի ուսուցումը մեր դպրոցներէն ներս եւ ի՞նչ դեր կը վերապահէք հայագիտական հիմնարկներուն՝ Հայկապահայ, Պէյրութ կամ այլուր: Անոնց հիմնական առաքելութիւնը ի՞նչ պէտք է ըլլայ:

Լ.Շ.- Վերջերս մամուլի մէջ («Պայքար» շաբաթաթերթ) 20 թիւէ բաղկացած լայնածաւալ յօդուածաշարք մը հրատարակեցի՝ լուսարձակի տակ առնելով ոչ միայն սփիւռքահայ ամէնօրեայ վարժարաններու ընդհանուր համայնապատկերը, այլեւ՝ մեր կրթական յարկերուն տակ բոյն դրած ու հայերէնի ուսուցման առնչուող նշմարելի ու աննշմարելի բոլոր ախտերը, բոլոր հարցերը:

Ի յայտ եկաւ, որ մենք ներկայիս ունինք 135 ամէնօրեայ վարժարաններ՝ Միջին Արեւելքէն մինչեւ Հիւսիսային ու Հարավային Ամերիկաներ եւ Աւստրալիա:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**Խոյ**  
Հնարամիտ ու խելացի էք: Դժուար խնդիրները դիպրոթեամբ պիտի լուծեք եւ ձեր ընկերներուն հիացումին արժանանաք:



**Ցուլ**  
Հաւասարակշռուած էք: Մարդիկ պիտի գնահատեն ձեզ: Երկար տառապանքէ ետք ձեր գործերը պիտի արդիւնաւորուին:



**Երկուորեակ**  
Վերջապէս պիտի հանդիպիք ձեր սիրելիին եւ գուարճանաք: Շուտով ուրախ լուր մըն ալ պիտի ստանաք: Շաբաթը հաճելի է:



**Խեցգետին**  
Նոր գործի մը առաջարկը պիտի ստանաք: Մի՛ մերժեք գայն: Հաճելի հաւաքոյթ մը պիտի կազմակերպեք ձեր ընկերներուն հետ:



**Առիւծ**  
Երկար ատեն է ի վեր սպասուած ժամը պիտի հասնի: Ընտանեօք հաճելի եւ անմոռանալի պահեր պիտի ապրիք:



**Կոյս**  
Ձեր շնորհալի կեցուածքը խաղաղութիւն կը բաշխէ բոլորին: Ձեր դիւանագիտութեան շնորհիւ բարձունքներ պիտի նուաճեք:



**Կշիռք**  
Ձեր ընտանեկան բարոյթները աստիճանաբար պիտի լուծուին եւ դուք հանգստանաք: Մտերիմ ընկեր մը պիտի աջակցի ձեզի:



**Կարիճ**  
Մարդասեր ու բարի էք: Ձեր ընկերները վստահութեամբ պիտի դիմեն ձեզի եւ դուք սիրայօժար օգնեք անոնց:



**Աղեղնաւոր**  
Նիւթական գետնի վրայ յաջողութիւններ պիտի ունենաք եւ ուրախանաք: Հեռաւոր երկրէն բարեկամ մըն ալ նուրբ մը պիտի ստանաք:



**Այծեղջիւր**  
Անդադար կ'աշխատիք՝ առանց ակնկալութեան: Վերջապէս պիտի պարգեւատրուիք եւ գովասանքի արժանանաք: Համբերեցէ՛ք:



**Ջրհոս**  
Չափազանց բարկացկոտ մի՛ ըլլաք: Գնահատեցէ՛ք ձեր ընտանիքի անդամներուն ցուցաբերած գոհողութիւնը ձեզի հանդէպ: Երախտապարտ եղէ՛ք:



**Ձուկ**  
Առողջութիւնը երջանկութեան բանալին է: Անընդհատ աշխատանքը կը զբաղեցնէ ձեզ ու կը փարատէ ձեր վիշտերը: Մի՛ ծուլանաք:



## ՈՐՔԱՐՆ ԶՈՒՐ ՊԷՏՔ Է ԽՄԵԼ ՏԱՔ ՕՐԵՐՈՒՆ



Եթէ սովորական օրերուն մարդ օրական մինչեւ 2 լիթր ջուր պէտք է խմէ, տաք օրերուն մարմինը աւելի շատ ջուրի կարիք կ'ունենայ՝ մօտաւորապէս 3 լիթր եւ աւելի: Մարդիկ, որոնք աշխոյժ կենսակերպ ունին, այսինքն՝ կը մարդուին կամ ֆիզիքական ծանր աշխատանք կը տանին, պէտք է օրական 3 լիթրէն աւելի ջուր խմեն:

Զաղցր հիւթերը, սուրճը կամ թէյը չեն կրնար մարմինի ջրային պահանջը բաւարարել: Անհրաժեշտ է խմել մաքուր՝ առանց կազի ջուր:

4-6 տարեկան փոքրիկները տաք օրերուն պէտք է առնուազն 2 լիթր ջուր խմեն, իսկ 6 տարեկանէն մեծ փոքրիկները՝ 2,5-3 լիթր:

Նորածին մանուկներուն պէտք է աւելի շատ ջուր տալ, յատկապէս անոնց, որոնք արհեստական կաթնախառնուրդով կը սնանին: Կրօքով կերակրող մայրերը նոյնպէս պէտք է սովորականէն աւելի ջուր խմեն տաք եղանակին:

Ջուրի պակասը կրնայ հանգեցնել ուշաթափման, գլխապտոյտի, իսկ արեւուն տակ երկար մտաւր արեւահարութեան պատճառ կը դառնայ:

## ԻՆՉ ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱԿԱԿԱՆ ՄԱՇԿԻ ԽՆՁԱՄՔԻՆ ՄԱՍԻՆ

Հայկական Doctors.am կայքին հետեւողները դեմքի մաշկի խնդիրներուն եւ խնամքին մասին հետեւեալ 7 հարցումները ուղղած են կայքի մասնագետներին:



Նագետ բժիշկներուն եւ ստացած համապատասխան պատասխաններ:

Ստորեւ կը ներկայացնենք բոլորս մտահոգող այս հարցերն ու անոնց պատասխանները:

**1. Ինչի՞ հետեւանքով 25-30 տարեկանէն ետք դեմքին վրայ ծակտիկներ կը յառաջանան:**

Ասիկա տան պայմաններու մէջ մաշկի սխալ խնամքի հետեւանքն է:

**2. Ինչո՞ւ աչքին շուրջ մուգ շրջանակներ կը յառաջանան:**

Աչքի մուգ շրջանակները ժառանգական են: Նաեւ կրնան յառաջանալ ներքին հարցերու հետեւանքով, ինչպէս՝ երիկամներու աշխատանքի խանգարման պարագաներ եւ այլն...:

**3. Արդեօք ճի՞շդ է իւրդոտ մաշկը խոնացնելը:**

Խոնացնելու կարիք չկայ: Իւրդոտ մաշկը պէտք է ճարպագրկել եւ յատուկ ձեւերով խնամել:

**4. Դեմքի մկանները մարդելը կրնա՞յ կանխել կնճիռներու յառաջացումը:**

Ճիշդ վարժութիւնները կրնան կանխել կնճիռները: Դեմքի մկանները միշտ պէտք է հանգըստացնել:

**5. Արդեօք վնասակար է scrub-ներու կիրառումը տան պայմաններուն մէջ:**

Վնասակար չէ, եթէ ձեր մաշկի տեսակին համապատասխան ճիշդ scrub ընտրեք: Շաբաթը երկու անգամ կարելի է օգտագործել գայն:

**6. Ո՞ր տարիքէն պէտք է սկսիլ մաշկը խնամել:**

Մաշկը ծնած օրէն իսկ պէտք է խնամել: Անցումային տարիքին կարելի է այցելել մաշկաբան:



Նի, որպէսզի ճիշդ խորհուրդներ տայ տուեալ մաշկի տեսակին, խնամքի միջոցներուն եւ խնամքի կանոններուն մասին:

**7. Ինչպէ՞ս ընտրել դեմքի խնամքի քսուկը՝ cream-ը եւ ինչի՞ն պէտք է ուշադրութիւն դարձնել:**

Դեմքի խնամքը շատ կարեւոր է եւ իւրաքանչիւր բան ընտրելէն առաջ անպայման պէտք է հետեւիլ մաշկաբանի յորդորներուն: Պէտք է ընտրել քսուկը ըստ մաշկի տեսակին՝ չմոռնալով, որ քսուկէն գատ նաեւ լուսցուելու հետոյ կը՝ tonic-ը շատ կարեւոր է վերջնական արդիւնքին համար:

## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պապեթի ախոյեանութեան աւարտական քառեակի մրցումներուն Յալէպի Կիլի եւ Դամասկոսի Ուսիտէ խումբերը իրենց տեղերը գրաւեցին աւարտական մրցումին: Խումբերը կ'եսաւարտական հանգրուանին կրցան արձանագրել երկու յաղթանակ եւ մէկ պարտութիւն:



- Սուրիոյ ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան աւարտին Յալէպի Յուրիէ եւ Թարթուսի Սահէլ խումբերը մրցաշրջանը յաջողութեամբ աւարտելէ ետք բարձրացան Ա. դասակարգ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌԵԱԼԸ ՄՈՏՐԻՉԻՆ ՅԵՏ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՑ

Սպանիոյ Ռեալ Մատրիտ ակումբի պատասխանատուները Նոր պայմանագիր ստորագրեցին 37-ամեայ քրուսթացի կիսապաշտպան Լուքա Մոտրիչին հետ, տեղեկացուց Ես. ԵՍ-ը: Պաշտօնական յայտարարութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ: Կողմերը համագործակցութիւնը պիտի երկարաձգեն մինչեւ 2024 թուականի Յունիս: Սպանիոյ աւարտած առաջնութեան Մոտրիչը մասնակցեցաւ 33 հանդիպումի, նշանակելով 4 կոլ, եւ կատարելով 3 կոլային փոխանցում: Այս ամիս Արքայական ակումբը արդէն երկարաձգեց պայմանագրերը սպանացի կիսապաշտպան Տանի Սեբալէոսի, սպանացի պաշտպան Նաչո Ֆերնանտէզի եւ գերմանացի կիսապաշտպան Թոնի Զրոսի հետ, ինչպէս նաեւ ձեռք բերաւ անգլիացի կիսապաշտպան Պելլենկամը:



### ԼՈՒԻՍ ԷՆՐԻՔԵՆ ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆԻ ՄԱՐԶԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՐ

Ֆրանսայի բազմակի ախոյեան Փարիզ Սան Շերմանի պատասխանատուները ֆութպոլի խումբի մարզիչ որոշեցին Սպանիոյ հաւաքականի Նախկին մարզիչ Լուիս Էնրիքէն: Ֆրանսական «Լո Փարիզեան» թերթը նշեց թէ այս շաբթուան աւարտին ակումբը պաշտօնապէս պիտի ներկայացնէ կազմի նորանշանակ մարզիչը:



Ըստ աղբիւրին գոյգ կողմերը համաձայնած են պայմանագրի բոլոր յօդուածներուն, ինչպէս նաեւ համաձայնաբար չեղեալ պիտի նկատեն ներկայ մարզիչ Ճալթի հետ եղած պայմանագիրը որ կ'աւարտէր 2024-ի կէսին, եւ ան պիտի ստանայ վեց միլիոն եւրո նիւթական փոխանակում: Նշենք, թէ Էնրիքէն արդէն իսկ ակումբի պատասխանատուներուն հետ կը սերտէ որոշ խաղացողներու անուններ, որոնք պիտի միանան ֆրանսական ակումբին: «Լո Փարիզեան» թերթը յիշեց նաեւ, թէ Փարիզ Սան Շերմանը 22 Յուլիսին 2 Օգոստոսին ճափոնի մէջ ուսումնամարզական հաւաք պիտի կատարէ Էնրիքի գլխաւորութեամբ:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 444)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■								
2									■			
3			■			■						
4						■	■					
5											■	
6		■			■			■			■	
7							■					
8	■										■	
9					■	■						
10		■								■		■
11			■			■						
12												

### Հորիզոնական

- 1- Ամուսինին քոյրը: Գովասանք:
- 2- Անսպասելի դէպք: Բաջ:
- 3- 97: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Մարմինը՝ մեջքէն վեր, առանց թելերուն ու գլուխին:
- 4- Հակառակ՝ 51: Ձայնաւոր տառեր: Հակառակ՝ գիւղաքաղաք:
- 5- Բաղաձայն տառեր: Թուր: 82:
- 6- Եական բայ: Դատարկ:
- 7- Միջնադարեան անառիկ բերդ, որ կը գտնուի ձորագետի ձախ ափին: Հիմն:
- 8- Բնութիւնը ծածկող ձմեռնային վիճակ:
- 9- Արգելական: 460: Տարածքի միաւոր:
- 10- Հասարակ ժողովուրդի պատկանող: Կրկնուած բաղաձայններ:
- 11- Գիրի եւ դպրութեան աստուածը: Այն քաղաքը, ուր Յիսուս առաջին հրաշքը գործեց:
- 12- «Թաղականին Կնիկը» վեպին հեղինակը:

### Ուղղահայեաց

- 1- Երգարան: Հակառակ՝ թռչուններու խումբ:
- 2- Նգովք: Երիվար:
- 3- Ձայնանիշ: Արական անուն: 4600:
- 4- Բեմադրիչ Միեր Մկրտչեանի ֆիլմերէն:
- 5- Մկան: 1400: Արական անուն:
- 6- 5060: Յամաքամաս մը:
- 7- Ձայնաւոր տառեր: Իգական անուն:
- 8- 7030: Յարմար:
- 9- Գիշատիչ կենդանի մը: Իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ 4060:
- 10- Օտար տեղեր բնակող: Հակառակ՝ հայկական մականուններու վերջավանկը:
- 11- Ճշմարիտ: Սրբուհի մը:
- 12- Վրէժխնդիր: Անձնական դերանուն:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 443)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	մ	ա	ն	ն	դ	ա	կ		ս	տ	է	պ
2	ա	լ		ե	ն	հ	ա	ն				ա
3	ք		ե	ա	ն			պ	ա	ն	ի	ք
4	տ	ա	ք		յ	ի	դ		պ		ր	ա
5	ի		ա	հ	ա		ա	ն	ա	կ		ւ
6	կ	ի	զ	ա	կ	է	տ		ր	ա	ք	ա
7		կ				ք			ծ	յ		ն
8	ս		ն	զ	ի		ն	ք		մ	է	դ
9	լ	ե	ւ	ն	ն	շ	ա	ն	ք		ր	
10	ա			յ		ա		ա	ա			ա
11	ց	ն	լ	ք	ե	ք		տ	ն	ա	ն	կ
12	ք	լ	ա		լ	ա	լ		կ	ն	ա	ն

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 3/7



22° 37°

Երեքշաբթի 4/7



23° 37°

Չորեքշաբթի 5/7



24° 38°

Հինգշաբթի 6/7



22° 38°

Ուրբաթ 7/7



22° 35°

Շաբաթ 8/7



23° 38°

Կիրակի 9/7



23° 38°

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՋԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻԱԽՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԱԾ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆՐԵՍ



Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգաբնակի, Համագգայինի «Բարսեղ Կանաչեան» Երաժշտական Միախորի Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ 2022-2023 տարեշրջանի շրջանաւարտներու վկայականաց բաշխման հանդէսը, որ ձեռնուած էր Համագգայինի հիմնադրութեան 95-ամեակին, Կիրակի, 25 Յունիս 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Ա. Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շալթ» սրահին ներս:

Սրբազան Հօր կողմէն հանդէսին ներկայ գտնուեցան Առաջնորդի Օգնական Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Առաքել Աբղ. Գատեհճեան, Ազգ. Վարչութեան անդամներ՝ Արմէն Գասպարեան եւ Գուրգէն Գալուստեան, Պատկան Մարմինի ներկայացուցիչ Յարութ Հայրապետեան, Համագգայինի Սուրբ Շրջ. Վարչութեան ատենապետ Ռաֆֆի Սիլվահեան, միաւորին մօտ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ Մարիա Պողիկեան, միութիւններու եւ հալէպահայ երաժշտանոցներու ներկայացուցիչներ եւ ելոյթին բաժին բերողներու ծնողներ:

Համագգայինի «Բարսեղ Կանաչեան» Երաժշտական Միախորի Վարչութեան անունով բացման խօսք արտասանեց ատենապետ մեթր Շողեր Մուշեղեան-Հայրապետեան: Ան լուսարձակի տակ առաւ «Բարսեղ Կանաչեան» Երաժշտական Դպրոցին առաքելութիւնը՝ հայ նոր սերունդներուն երաժշտական ճաշակը զարգացնելու եւ անոնց միջազգային դասական երաժշտութեան, մանաւանդ հայ մեծանուն երաժիշտներու ստեղծագործութիւններուն, հայերէն երգերուն եւ երաժշտութեան ծանօթացնելու առումով: Իր խօսքի ավարտին, ան վարչութեան անունով շնորհակալական խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազան Հօր, Համագգայինի Սուրբ Շրջ. Վարչութեան, Ազգ. Միացեալ Վարժարանի Հոգաբարձութեան, Ա. Մանուկեան Ժ. Տան Խնամակալութեան, Երաժշտանոցի տնօրէնուհի Անժելա Սեմերճեան-Յակոբեանի եւ ուսուցչական կազմին:

Օրուան հանդիսավարն էր Մարին Գրիգորեան:

Երկու մաս բաղկացած յայտագիրին ընդմէջէն մենախօսակներով հանդէս եկան շրջանաւարտներ՝ Մարիա Բրդոյեան (երգեհոն, շրջանաւարտ, ուսուցչուհի՝ Յելենա Տարաքճեան), Բալիկ Հայրապետեան (ջութակ, շրջա-

նաւարտ, ուսուցչուհի՝ Լուսիա Պանտաք, դաշնամուրի ընկերակցութեամբ Եագուլ Պանտաքի), Անի Պողիկեան (դաշնամուր յետ-աւարտական, մասնագիտական կարգ, ուսուցչուհի՝ Մարգարիտ Խաչատրեան-Պանտաք):

Մեներգներով հանդէսին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ ձայնամարդութեան բաժնի նախորդ տարիներու շրջանաւարտներ՝ Սիւզի Պետրոսեան, Գարլա Ալ-Նահի եւ Բիւզակոյ Պեպեճեան:

Վկայականաց բաշխման հանդէսին առաջին անգամ ըլլալով բեմ բարձրացաւ երաժշտական դպրոցի աշակերտական, նորաստեղծ, լարային նուագախումբը, որ կը բաղկանար խումբ մը ջութակի աշակերտներէ, ղեկավարութեամբ Լուսիա Պանտաքի:

Նուագախումբին մաս կը կազմէին եւ նուագողներուն դաշնամուրով կ'ընկերակցէին հետեւեալները:

Ա. ջութակ՝ Սերենա Պերպերեան, Մարիա Պաղտոյեան, Նայիրի Զակրաքեան:

Բ. ջութակ՝ Բալիկ Հայրապետեան, Արիի Արապանեան, Սագօ Պալապան եւ Սիրուն Աւետիքեան:

Դաշնամուրի ընկերակցութիւն՝ Անի Պողիկեան, Փաթիլ Զաքարեան, Ալիք Պաղտոյեան, Երուանդ Գասպարեան եւ Մինաս Զեօշկերեան:

Նուագախումբը փունջ մը միջազգային ու հայկական ժողովրդային երաժշտական ստեղծագործութիւններ ներկայացուց:

Այնուհետեւ Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ վկայականաց բաշխումը կատարուեցաւ: Վկայականներ ստացան:

Մարիա Բրդոյեան (երգեհոն-աւարտական), Բալիկ Հայրապետեան (ջութակ, աւարտական), Անի Պողիկեան (դաշնամուրի յետ-աւարտական):

Հունկ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը իր սրտի խօսքը արտասանելով շնորհաւորեց վկայեալներն ու բոլոր հանդէս եկողները, բարձր գնահատեց անոնց կատարողական որակը եւ յատկապէս շնորհաւորեց լարային նուագախումբին կազմութիւնը, շնորհաւորելով գեր. ղեկավարն ու բոլոր ուսուցիչները, ինչպէս նաեւ երաժշտանոցի տնօրէնութիւնը, միախորի վարչութիւնն ու ծնողները, դիտել տալով որ երաժշտութիւնը կը հարստացնէ մարդուն ներաշխարհին ու ազնիւ ու բանիմաց կը դարձնէ երաժիշտը:

**Սարին Գրիգորեան**